Եվրոպայի խորհուրդ

Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ. ծրագիր

Եվրոպայի խորհրդի գրասենյակ Երևանում

էրեբունի Պլազա, 6-րդ հարկ
Վազգեն Սարգսյան փ. 26/1
Երևան 0010, ՀՀ
Հեռ.՝ +374 10 546322
էլ. փոստ՝ coe.yerevan@coe.int

PREMS 138015

ARM

www.coe.int
www.coe.am

Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքների հարցերով զբաղվող մայրցամաքի առաջատար կազմակերպությունն է: Նրա կազմում են 47 անդամ պետություն, որոնցից 28-ը Եվրոպական միության անդամ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթուղթ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրականացումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

www.coe.int
www.coe.am

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Եվրոպայի խորհուրդ

Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ. ծրագիր

GR-DEM (2015) 20rev
10-ը սեպտեմբերի, 2015թ.

Սույն փաստաթուղթը հաստատվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2015թ. սեպտեմբերի 15-16-ին [CM/Del/Dec(2015)1235]

Բովանդակություն

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ....6
7ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 7
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ....7

1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ 9
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 9
Հիմնավորումների աղբյուրները....12
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ....12

ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ....13
1.1 Ազգային մակարդակում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների արդյունավետ կիրառությունը 13
1.2 Օժանդակություն քրեական արդարադատության բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ 14
1.3 Գենդերային հավասարություն, պայքար կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ, պայքար խտրականության դեմ 16
1.4 Արտահայտվելու/լրատվամիջոցների ազատության ամրապնդում....17
1.5 Տվյալների պաշտպանություն 18

2. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 18
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 18
Հիմնավորումների աղբյուրները....22
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ....22

ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ....22
2.1 Սահմանադրական բարեփոխումներ....22
2.2 Դատական բարեփոխումներ 23
2.3 Քրեակատարողական բարեփոխումներ 23
2.4 Պրոբացիա 24

3. ՊԱՅՔԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՄ 25
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 25
Հիմնավորումների աղբյուրները....26
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ....26

ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ....26
3.1 Պայքար կոռուպցիայի և փողերի լվացման դեմ....26
3.2 Պայքար կիբեռհանցավորության դեմ....27

4. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ....28
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 28
Հիմնավորումների աղբյուրները....30
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ....30

ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ....31
4.1 Ազատ և արդար ընտրություններ 31

4.2 Տեղական ժողովրդավարություն....31

ՀԱՎԵԼՎԱԾ I. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2018ԹԹ. ԾՐԱԳԻՐ....35

ՀԱՎԵԼՎԱԾ II. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ....50

ՀԱՎԵԼՎԱԾ III. ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՑԱՆԿ....51
1. Մարդու իրավունքների պաշտպանություն և խթանում....51
2. Արդարադատության ապահովում....55
3. Պայքար իրավունքի գերակայությանը սպառնացող գործոնների դեմ....55
4. Ժողովրդավարական կառավարման խթանում....57

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԳ	Արևելյան գործընկերություն
ԱՄՆՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԽԽՎ	Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՍԽ	Եվրոպական սոցիալական խարտիա
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ԽԿԿ	Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտե
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Կոնգրես	ԵԽ տեղական և տարածքային իշխանությունների կոնգրես
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀՀԱ	Հայաստանի համայնքների հանրապետական ասոցիացիա
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՆԿ	Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե
ՎԱԼՄ	Վեճերի այլընտրանքային լուծում
ՎԵՍԽ	Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա
ՎՀ	Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով)
ՔԿ	Քննչական կոմիտե
CDDG	Ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական կոմիտե
CEB	Եվրոպայի խորհրդի զարգացման բանկ
CEPEJ	Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտե
CETS	Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա
COMUS	Համայնքավար քաղաքային ռազմավարություններ պատմական քաղաքներում
ECRI	Ռասիզմի և անհանդուրժողության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով
EXEC	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավճիռների կատարման վարչություն
GIZ	Գերմանիայի միջազգային համագործակցության գործակալություն
GR-DEM	Ժողովրդավարության հարցերով զեկուցողների խումբ
GRECO	Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ
GRETA	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի փորձագետների խումբ
HELP	Մարդու իրավունքների թեմայով իրավաբանների կրթության եվրոպական ծրագիր (HELP ծրագիր)

MONEYVAL	Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումները գնահատող փորձագետների խումբ
PCF	Եվրոպական միության/Եվրոպայի խորհրդի Արևելյան գործընկերության ծրագրային համագործակցության շրջանակ
SDC	Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն
UNICEF	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

2001 թվականին Եվրոպայի խորհրդին անդամակցելուց ի վեր Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել ժողովրդավարական բարեփոխումներ իրականացնելու գործընթացում: Այդ մասին հիշատակվել է Նախարարների կոմիտեի Ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի (GR-DEM) զեկույցում՝ 2013թ. մարտին Հայաստան կատարած այցից հետո: Հաշվի առնելով այդ առաջընթացը, 2013թ. մայիսին ավարտվեց մոնիթորինգի հատուկ ընթացակարգը, որը նախաձեռնվել էր 2010թ. դեկտեմբերին: Հայաստանի հանձնառությունների մոնիթորինգը ներկայումս կատարվում է Եվրոպայի խորհրդի ընթացիկ աշխատանքի շրջանակում: Ժողովրդավարության ամբողջացման, իրավունքի գերակայության ամրապնդման և մարդու իրավունքների հզորացման նպատակով օրենսդրության, կառուցակարգերի և գործելակերպի բարեփոխումը տևական գործընթաց է: Եվրոպայի խորհուրդը հանձնառու է՝ օժանդակելու Հայաստանին նշված բարեփոխումների ընդլայնման և արագացման գործում:

Գործողությունների սույն՝ 2015-2018թթ. ժամանակահատվածի ծրագրում հաշվի են առնվում ժողովրդավարական բարեփոխումների գործընթացում Հայաստանի նախկինում հռչակած և ներկայումս ձևավորվող նոր գերակայությունները: Արտացոլվում է նաև քաղաքականությունը, իրավական դաշտը և գործելակերպը փոխկապակցելու համար ինստիտուցիոնալ կարողությունները զարգացնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ Հայաստանում իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքները և ժողովրդավարական սկզբունքները պահպանելու և խթանելու նպատակով կարևորագույն շահակիցների (Կառավարության, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների) միջև գործընկերությունն էլ ավելի ամրապնդելու անհրաժեշտությունը:

Գործողությունների ծրագիրը մշակվել է՝ սերտորեն խորհրդակցելով Հայաստանի իշխանությունների հետ: Այն արտացոլում է Հայաստանի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի մոնիթորինգային մարմինների նորագույն եզրակացությունները, բանաձևերը և հանձնարարականները: Ավելին, Գործողությունների ծրագրում հաշվի են առնվում Գործողությունների նախորդ՝ 2012-2014թթ. ծրագրի արդյունքները և ձեռքբերումները: 2015-2018թթ. ծրագրում հաշվի են առնվում Եվրոպայի խորհրդի մարմինների՝ ներառյալ Նախարարների կոմիտեի, Խորհրդարանական վեհաժողովի, Մարդու իրավունքների հանձնակատարի, Վենետիկի հանձնաժողովի, Խոշտանգման կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ) և Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի ներկայացրած եզրակացությունները և հանձնարարականները: Հայաստանի հետ Եվրոպայի խորհրդի համագործակցության հիմնական շահառուների թվում են պետական կառույցները, քաղաքացիական հասարակությունը և հասարակայնության լայն շրջանակները:

Հայաստանի իշխանությունները և Եվրոպայի խորհուրդը համատեղ կարգով առանձնացրել են համագործակցության կարևորագույն հետևյալ գերակա ուղղությունները.

- Ազգային մակարդակում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառության բարելավում,
- Սահմանադրական արդարադատության ամրապնդում,
- Օժանդակություն քրեական արդարադատության բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ,
- Արդարադատության համակարգի հզորացում,
- Պայքար կոռուպցիայի, փողերի լվացման և կիբեռհանցավորության դեմ,
- Օժանդակություն ոստիկանության և քրեակատարողական համակարգի բարեփոխումներին,

- Տեղական ժողովրդավարության ամրապնդում,
- Գենդերային հավասարության խթանումը,
- Պայքար ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության դեմ,
- Կարողությունների զարգացում ընտրությունների բնագավառում, և
- Քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների զարգացում:

Պետության համար մշակված առանձին գործողությունները լրացվելու են համահունչ տարածաշրջանային նախաձեռնություններով:

ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Գործողությունների սույն ծրագրի իրագործումը գնահատվելու է Եվրոպայի խորհրդի և Հայաստանի իշխանությունների համատեղ ջանքերով: Այդ նպատակի համար ստեղծվելու է Համակարգող կոմիտե, որի կազմում ներկայացված են լինելու Եվրոպայի խորհուրդը, Արտաքին գործերի նախարարությունը և Գործողությունների սույն ծրագրի իրագործմանը մասնակցող ազգային այլ շահակիցները: Համակարգող կոմիտեի նիստերը գումարվելու են պարբերաբար՝ նպատակ ունենալով գնահատել հաստատված ծրագրերի իրագործումը, քննարկել առկա մարտահրավերները և ապագա համագործակցությանը վերաբերող առաջարկները: Եվրոպայի խորհրդի ծրագրերի բուն կառուցվածքի մեջ ներդրված է լինելու գենդերային հավասարության սկզբունքը: Բացի դրանից, Եվրոպայի խորհուրդը խթանելու է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությունը ծրագրային գործունեության մշակմանը և իրագործմանը:

Եվրոպայի խորհուրդը պարբերաբար թարմ ընթացիկ տեղեկություններ է տրամադրելու Գործողությունների ծրագրի առաջընթացի և արդյունքների վերաբերյալ: Այս առումով, Ծրագրերի գլխավոր տնօրինության աշխատակազմը միջանկյալ և ավարտական հաշվետվություններ է ներկայացնելու Նախարարների կոմիտե:

Գործողությունների ծրագրի ղեկավարման և իրագործման պատասխանատվությունը կրելու են Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը և Ստրասբուրգում գտնվող գործառնական ծառայությունները: Մասնավորապես, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը կարևոր դերակատարում կունենա ծրագրերի գործնական իրագործման ընդհանուր ղեկավարման և համակարգման հարցերում:

Գործողությունների ծրագրով նախատեսված ծրագրերը ֆինանսավորվելու են բազմաթիվ աղբյուրներից և համակարգվելու են Հայաստանում ներկա միջազգային գործընկերների հետ: Ֆինանսավորումը տրամադրվելու է Եվրոպայի խորհրդի սովորական բյուջեից, ինչպես նաև՝ դոնոր պետությունների և միջազգային կազմակերպությունների կամավոր հանգանակություններից՝ ներառյալ Եվրոպական միության/Եվրոպայի խորհրդի Արևելյան գործընկերության 2015-2017թթ. ծրագրային համագործակցության կառուցակարգից (PCF):

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

Եվրոպայի խորհուրդն իր գործունեությունը համակարգելու է Հայաստանում գործող թե՛ ազգային, թե՛ միջազգային գործընկերների հետ՝ նպատակ ունենալով խուսափել կրկնողությունից և առավելագույնի հասցնել փոխհարստացնող էֆեկտը: Ծրագրերը և աշխատանքներն իրականացվելու են Հայաստանի կառավարության, ազգային կառույցների, քաղաքացիական հասարակության և կարևորագույն այլ շահակիցների հետ գործընկերության

պայմաններում: Բոլոր ծրագրերում կապահովվի ազգային գործընկերների՝ սեփականատիրոջ կարգավիճակով մասնակցությունը: Կամրապնդվեն ազգային գործընկերների կարողությունները:

Եվրոպայի խորհուրդը սերտորեն համակարգելու է աշխատանքները Գործողությունների ծրագրի հիմնական գերակա ուղղություններում ակտիվորեն գործող երկկողմ և բազմակողմ դոնորների հետ: Ներկայումս Եվրոպայի խորհուրդը համանախագահում է Ժողովրդավարական կառավարման հարցերով դոնորների համակարգման խումբը, որն անդրադառնում է Գործողությունների ծրագրի բոլոր երեք հիմնասյուներին՝ մարդու իրավունքներին, իրավունքների գերակայությանը և ժողովրդավարությանը:

Եվրոպական միությունը շարունակելու է կարևորագույն գործընկեր մնալ սույն ծրագրով նախատեսված բոլոր ոլորտներում աշխատանքների իրագործման ընթացքում: Համատեղ գործունեության իրականացման հիմնական գործիքը լինելու է ԵԽ/ԵՄ Արևելյան գործընկերության 2015-2017թթ. ծրագրային համագործակցության կառուցակարգը (PCF): Հայաստանում, մասնավորապես, Եվրոպայի խորհուրդը PCF-ի միջոցով աշխատելու է մարդու իրավունքների եվրոպական չափանիշներն ազգային մակարդակով իրագործելու, քրեակատարողական համակարգը բարեփոխելու, կոռուպցիայի դեմ պայքարի և ընտրական օրենսդրության և պրակտիկայի բարեփոխումների ուղղությամբ:

ԵՄ-ն Հայաստանի հետ համագործակցում է Եվրոպական հարևանության քաղաքականության և վերջինիս արևելյան տարածաշրջանային ուղղության՝ Արևելյան գործընկերության շրջանակում: Հայաստանում ԵԽ-ի Գործողությունների սույն ծրագրի տեսանկյունից էական նշանակություն ունի ԵՄ-ի օժանդակությունն արդարադատության, հանրային ֆինանսների կառավարման, պետական կառավարման արդիականացման, կրթության և տարածքային զարգացման ոլորտներում: Բոլոր ոլորտներում ընթացիկ և ապագա համագործակցության կարևոր բաղադրիչ է օժանդակությունը պետական կառույցներին և ԵՄ-ի լավագույն փորձի ներկայացումը: Քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին օժանդակություն է ցուցաբերվում Հարևանության քաղաքացիական հասարակության ծրագրի (Neighbourhood Civil Society Facility) շրջանակում:

Մարդու իրավունքների պաշտպանության և խթանման բնագավառում ԵԽ-ն ջանքերը համակարգելու է ԵԱՀԿ-ի, ՄԱԶԾ-ի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ: ԵԱՀԿ-ն օժանդակություն է ցուցաբերում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին և մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկության բարձրացմանը Հայաստանում: Համընդհանուր պարբերական գնահատման (Universal Periodic Review) միջոցով ՄԱԶԾ-ն օժանդակություն է ցուցաբերում Հայաստանում մարդու իրավունքների իրավիճակի ուսումնասիրությանը: ՄԱԶԾ-ն ունի նաև խոշտանգման և վատ վերաբերմունքի դեմ պայքարի ծրագրեր, գենդերային հավասարության ծրագրեր, և աջակցում է Մարդու իրավունքների վերաբերյալ կրթության գործողությունների ծրագիրն ավարտին հասցնելու աշխատանքներին:

Արդարադատության ոլորտում ԵԽ-ն աշխատանքները համակարգելու է Համաշխարհային բանկի հետ, որը ոչ միայն օժանդակում է դատարանների շենքերի վերանորոգմանը, այլ նաև խորհրդատվություն է իրականացնում դատական համակարգի կառավարման (ներառյալ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համակարգերի) վերաբերյալ: Այս ոլորտում աշխատող գործընկերներից է GIZ-ը, որն աջակցություն է ցուցաբերում վարչական արդարադատության, քրեակատարողական բարեփոխումների և քրեական արդարադատության, քաղաքացիական օրենսդրության և քաղաքացիական դատավարության օրենսդրության, ինչպես նաև արդյունավետ դատական համակարգի կայացման ոլորտներում: Բացի դրանից, Գերմանիայի միջազգային իրավական համագործակցության հիմնադրամն զբաղվում է նոտարիատի օրենսդրության, քրեակատարողական օրենսդրության և դատական ծառայողների

վերապատրաստման ուղղություններով: Եվրոպայի խորհուրդը գործունեությունը համակարգելու է նաև ԵԱՀԿ-ի հետ, որն օժանդակում է քրեական արդարադատության ոլորտում դատարանների մոնիթորինգին, ինչպես նաև՝ ԱՄՆՄԶԳ-ի հետ, որն աջակցում է Հայաստանի դատավորների միությանը դատարանների անկախության հարցերում և օժանդակում է Փաստաբանների պալատին:

ԵԽ-ն կոռուպցիայի, փողերի լվացման և կիբեռհանցավորության դեմ պայքարի ուղղությամբ իր աշխատանքները համակարգելու է ՄԱԿ-ի, Համաշխարհային բանկի, ԱՄՆՄԶԳ-ի և ԵՄ-ի հետ, որոնք ակտիվորեն օժանդակում են Հայաստանի կառավարությանն իրավունքի գերակայությանը սպառնացող այդ խնդիրների դեմ պայքարի՝ վերջինիս ջանքերում:

ԵԽ-ն ակտիվորեն համագործակցում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) հետ տեղական ինքնակառավարման բարեփոխումների ոլորտում: SDC-ի գործունեությունը կենտրոնացած է տեղական ինքնակառավարման բարեփոխումներին օժանդակելու շուրջ, որի համար աջակցություն է ցուցաբերվում ազգային շահակիցների՝ քաղաքականությունը մշակելու և ուղղորդում իրականացնելու կարողությունների զարգացմանը: SDC-ն աջակցություն է ցուցաբերում նաև տեղական ինքնակառավարման գործընթացների և գործիքների բարելավմանը: Այս առումով կարևոր գործընկերներից է նաև GIZ-ը, որը լուրջ դերակատարում ունի համայնքների խոշորացման և տեղական ինքնակառավարման իրավակարգավորման բազայի կատարելագործմանն առնչվող բարեփոխումների խորհրդատվության հարցում: 2014 թվականին ԱՄՆՄԶԳ-ն նախաձեռնել է նոր ծրագիր, որի նպատակն է աջակցել առավել մասնակցային, արդյունավետ և հաշվետու կառավարմանը Հայաստանում: ՄԱԶԾ-ն նախկինում աջակցություն է ցուցաբերել ավագանիների կարողությունների զարգացմանը և տեղական ժողովրդավարության գործընթացներում կանանց դերի բարձրացմանը: ՄԱԶԾ-ն ներկայումս իրականացնում է քաղաքացիների մասնակցությունն ավելացնելու նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությանն առնչվող ծրագիր: ՄԱԶԾ-ն նաև հյուրընկալում է տարբեր թեմաներով, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման թեմայով դոնորների համակարգման խմբերի հանդիպումները:

1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽԹԱՆՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ոլորտում ԵԽ-ի գործողությունների մեջ հաշվի է առնվում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը (2012թ.) և վերջինիս գործողությունների ծրագիրը (2014թ.), և օժանդակություն է ցուցաբերվում դրանց իրականացմանը: Հայաստանի իշխանությունների և ԵԽ-ի կողմից ոլորտում առանձնացվել են հետևյալ հիմնական գերակայությունները.

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (ԵՍԽ) իրագործման բարելավում ազգային մակարդակում, ՄԻԵԴ-ի դատավճիռների կատարմանն օժանդակության ցուցաբերում,
- Մարդու իրավունքների պաշտպանության նոր՝ 2016-2018թթ. գործողությունների ծրագրի մշակման և իրականացման ընթացքում խորհրդատվություն իշխանություններին,
- Օժանդակություն քրեական արդարադատության բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ՝ հատկապես ուշադրություն դարձնելով դատախազներին, քննիչներին և դատավորներին,
- Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության կատարելագործում,
- Գենդերային հավասարության խթանում և կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի խթանում,

- Արտահայտվելու/լրատվամիջոցների ազատության ամրապնդում,
- Տվյալների պաշտպանության ազգային համակարգերի կատարելագործում,
- Խղճի և կրոնի ազատության իրավունքը պաշտպանելու կարողությունների զարգացում:

Բրյուսելի 2015թ. հռչակագիրը հիշեցնում է, որ ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի դատական նախադեպի արդյունավետ իրագործման և ՄԻԵԴ-ի դատավճիռների կատարման ապահովման առաջնային պատասխանատուն անդամ պետություններն են: 2012 թվականից ի վեր Հայաստանը մի շարք նախաձեռնություններ է իրականացրել այս ուղղությամբ: Ընդունվել են Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և վերջինիս գործողությունների ծրագիրը: ՄԻԵԴ-ի և ԵԽ-ի հետ հաղորդակցությանն օգնելու և ՄԻԵԴ-ի դատավճիռների կատարումը բարելավելու նպատակով Արդարադատության նախարարությունում ստեղծվել է մասնագիտացած վարչություն: Դատավորների, դատախազների և քննիչների մասնագիտական պատրաստման որակը և արդյունավետությունը բարելավելու նպատակով ստեղծվել է արդարադատության նոր ակադեմիա: Կատարվել են օրենսդրական որոշ փոփոխություններ, մասնավորապես՝ ներդրվել է արդարադատության սխալներով և իրավապահ մարմինների անօրինական գործողություններով պատճառված ոչ նյութական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտը: ԵԽ-ի օժանդակությամբ բարելավվել է ՄԻԵԴ-ի դատական նախադեպի հասանելիությունը: Արդարադատության ակադեմիայի, Փաստաբանների պալատի և Փաստաբանական դպրոցի համար մշակվել են մարդու իրավունքների թեմաներով վերապատրաստման նյութեր: Մարդու իրավունքների թեմայով իրավաբանների կրթության եվրոպական ծրագրի (HELP ծրագիր) միջոցով իրականացվել է մարդու իրավունքների թեմաներով կրթություն իրավաբանների համար, իսկ դատական համակարգի ներսում ստեղծվել է մարդու իրավունքների ստորաբաժանում:

Այնուհանդերձ, դեռևս առկա են որոշ խնդիրներ, և լրացուցիչ ջանքեր են անհրաժեշտ մարդու իրավունքների եվրոպական չափանիշների լիարժեք և արդյունավետ կիրառությունն ապահովելու համար: 2014 թվականին ՄԻԵԴ-ը քննության է առել Հայաստանին վերաբերող 60 գանգատ, որոնցից 56-ը ճանաչվել են անընդունելի կամ կարճվել են, և կայացվել է 4 դատավճիռ, որոնցով արձանագրվել է ՄԻԵԿ-ի առնվազն մեկ խախտում: Առաջընթաց կա նաև ՄԻԵԴ-ի դատավճիռների կատարման հարցում: 2008-2015 թվականներին Նախարարների կոմիտեն փակել է քննարկվող 13 գործի վարույթները: Այնուհանդերձ, ՄԻԵԿ-ի չափանիշները կիրառելու գործընթացում ցանկալի կլիներ էլ ավելի բարելավել դատավճիռների կատարումը: Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը 2015 թվականի զեկույցում ընդգծել է, որ անհրաժեշտ է առավել հստակորեն սահմանել վճռաբեկ դատարանի դերը և այլ դատարանների հետ վերջինիս հարաբերությունները, այսինքն՝ ապահովել վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների կատարումը՝ բացառելով ճնշումները: Հանձնակատարը կարևորել է նաև անմեղության կանխավարկածի երաշխավորումը, նախնական կալանքի կիրառության սահմանափակումը և մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև պատշաճ հավասարակշռության ապահովումը: Ուստի, որպես առաջին գերակայություն, առաջարկվում է Հայաստանի իշխանությունների հետ համագործակցությունը կենտրոնացնել ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի դատական նախադեպի միատեսակ կիրառության բարելավման ուղղությամբ՝ այդ նպատակով համագործակցելով բոլոր դատարանների և Արդարադատության նախարարության հետ, ինչպես նաև՝ մարդու իրավունքների թեմաներով իրավաբանների կարողությունները զարգացնելու ուղղությամբ: Հատուկ օժանդակություն է ցուցաբերվելու ՄԻԵԴ-ի դատավճիռների լիարժեք կատարումն ապահովելու ուղղությամբ իշխանությունների ջանքերին:

Բացի դրանից, կարևորագույն խնդիրների շարքում են մնում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումները և պայքարը վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ: 2015թ. հունիսին քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններով տրվեց խոշտանգման նոր սահմանումը, որը համահունչ է միջազգային չափանիշերին՝ ներառյալ Խոշտանգման դեմ

պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիային: Շատ մոտ ապագայում սպասվում է նոր քրեական օրենսգրքի և նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը: Ինչպես 2015թ. զեկույցում նշել է Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը, լրացուցիչ ջանք է պետք գործադրել վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննությունը բարելավելու ուղղությամբ, մասնավորապես՝ ամրապնդելով հատուկ քննչական ծառայության անկախությունը և կարողությունները (քանի որ այդ կառույցն է պատասխանատու պետական պաշտոնյաների, իրավապահ և քրեակատարողական ծառայողների դեմ հարուցված գործերի (ներառյալ՝ վատ վերաբերմունքի բողոքներով հարուցված գործերի) քննության համար), և ապահովելով մարդու իրավունքների թեմաներով քննիչների վերապատրաստումը (2015թ. հունիսից այդ պատասխանատվությունը վերապահված է արդարադատության ակադեմիային): Մարդու իրավունքների խախտումների արդյունավետ քննությունն անհրաժեշտ է նաև բանակում, որտեղ շարունակվում են արձանագրվել ոչ մարտական պայմաններում բռնության դրսևորումներ, երբեմն՝ մահվան ելքով:

Ուստի, առաջարկվում է Հայաստանի իշխանությունների հետ համագործակցությունը կենտրոնացնել քրեական արդարադատության բարեփոխումներին և վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարին օժանդակելու ուղղություններով, մասնավորապես՝ աշխատելով Արդարադատության նախարարության, հատկապես՝ Կառավարության լիազոր ներկայացուցչի աշխատակազմի, հատուկ քննչական ծառայության, դատավորների և պաշտպանության նախարարության հետ:

Անհրաժեշտ է նաև վիճակագրական վերլուծության ենթարկել վատ վերաբերմունքի ցուցանիշները և բարելավել դրանց վերաբերյալ հանրության իրազեկվածությունը և պաշտոնական մարմինների արձագանքը նման դեպքերին: Շարունակում են խնդրահարույց մնալ բանակում ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերը, ինչպես նաև՝ վատ վերաբերմունքը և արտականոնադրական ճնշումները: ԵԽ-ն աջակցելու է Պաշտպանության նախարարությանը և վերջինիս մասնագիտացած ստորաբաժանումներին (ռազմական ոստիկանությանը և ռազմաբժշկական վարչությանը)՝ վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ կանխարգելման և քննության, ինչպես նաև՝ հաղորդումներ ներկայացնողների պաշտպանության թեմաներով զինված ուժերում ծառայողների կանոնավոր վերապատրաստումներ կազմակերպելու հարցում: Բացի դրանից, կկատարվեն ռազմական ոլորտի գործող օրենսդրության (կանոնակարգերի, ենթաօրենսդրական ակտերի, կանոնադրությունների, օրենքների և այլն) ուսումնասիրություններ և փոփոխություններ՝ նպատակ ունենալով դրանք համապատասխանեցնել մարդու իրավունքների միջազգային չափանիշներին:

2004 թվականին Հայաստանը վավերացրել է Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան՝ ընդունելով դրա 98 պարբերությունից 67-ը: Հայաստանը չի ընդունել կոլեկտիվ գանգատների ընթացակարգը: Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն 2009–2014թթ. եզրակացություններում արձանագրել է Խարտիայի՝ Հայաստանի կողմից ընդունված դրույթներին երկրում առկա իրավիճակի անհամապատասխանության մի քանի դեպք: Ավելին, Կոմիտեի կողմից իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկությունները տրամադրելու նպատակով անհրաժեշտ է բարելավել ազգային զեկույցները:

Ինչպես նշված է ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի 2011թ. զեկույցում, լրացուցիչ բարելավման կարիք ունի լրատվական դաշտի բազմազանությունը և բազմակարծությունը: Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների վերաբերյալ օրենսդրական դաշտի թերությունները հաղթահարելու լրացուցիչ անհրաժեշտության մասին հիշատակվել է նաև Վենետիկի հանձնաժողովի և Կրոնի կամ հավատքի ազատության հարցերով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի

խորհրդատվական խորհրդի 2009թ. համատեղ եզրակացության, ինչպես նաև՝ Ռասիզմի և անհանդուրժողության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) 2011թ. զեկույցի մեջ:

Անհրաժեշտ է գենդերային հավասարության ապահովման և կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտներում Կառավարության և քաղաքացիական հասարակության կողմից կատարվող աշխատանքները ներդաշնակեցնել Եվրոպայի խորհրդի չափանիշներին և օգտվել Եվրոպայի խորհրդի գենդերային հավասարության ռազմավարության իրագործման շրջանակում կատարվող մշակումներից և միջոցառումներից: ԵԽ-ն մշակել է աշխատանքային գործիքներ (լավագույն փորձի հավաքածու, ուղեցույց, հենանիշներ ամրագրող տեղեկանքներ և այլն), որոնք կարող են օգտակար լինել իշխանություններին գենդերային հավասարության ոլորտում ԵԽ-ի չափանիշներն իրագործելու հարցում: ԵԽ-ն օժանդակություն կցուցաբերի իշխանություններին մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում՝ ներառյալ աջակցությունը խոցելի խմբերի շրջանում իրազեկության բարձրացման միջոցառումներին:

Հիմնավորումների աղբյուրները.

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության գործողությունների ծրագիրը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանին վերաբերող դատական նախադեպը, Հայաստանում իրավիճակի՝ Եվրոպական սոցիալական խարտիային համապատասխանության վերաբերյալ Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի եզրակացությունները, Եվրոպական սոցիալական խարտիայի 50-ամյակի առթիվ Նախարարների կոմիտեի հռչակագիրը, Գլխավոր քարտուղարի ամենամյա զեկույցը ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության վիճակի վերաբերյալ՝ ներառյալ սոցիալական իրավունքների վերաբերյալ հանձնարարականները, Ռասիզմի և անհանդուրժողության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի (ECRI) 2010թ. զեկույցը և 2013թ. միջանկյալ եզրակացությունները, Եվրոպայի խորհրդի Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) զեկույցները Հայաստանի վերաբերյալ (2011թ., 2013թ., 2014թ.), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավճիռների կատարման վարչության (EXEC) փաստաթղթերը Հայաստանի վերաբերյալ, Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունները խղճի և կրոնի ազատության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ, Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայի վերաբերյալ թիվ 2012 բանաձևը, Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (CETS 108, հետայսու՝ թիվ 108 կոնվենցիա), թիվ 108 կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը վերահսկող մարմինների և տվյալների անդրսահմանային հոսքերի վերաբերյալ (CETS 181), որը վավերացվել է Հայաստանի կողմից, ինչպես նաև՝ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը 2014 թվականին Հայաստան կատարած այցելությունից հետո (CommDH(2015)2), Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի՝ Հայաստանի կողմից իրագործման վերաբերյալ զեկույցը (GRETA (2012)8), 2015թ. մարտի 27-ի Բրյուսելի հռչակագիրը, Ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի (GR-DEM) ենթախմբի պատվիրակության կողմից Հայաստան կատարած այցի զեկույցը Եվրոպայի խորհրդի նկատմամբ Հայաստանի հանձնառությունների կատարման առաջընթացի վերաբերյալ (GR-DEM(2013)3, 26-ը ապրիլի, 2013թ.):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Հայաստանի օրենսդրությունը և պրակտիկան էլ ավելի համապատասխանեցնել մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների խթանման և պաշտպանության ոլորտում Եվրոպայի խորհրդի չափանիշներին:

ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1.1 Ազգային մակարդակում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների արդյունավետ կիրառությունը

Հայաստանն իր իրավական համակարգի անբաժանելի մաս է դարձրել ՄԻԵԿ-ը և ընդունել է ՄԻԵԴ-ի իրավազորությունը: Հիմնական խնդիրն է մարդու իրավունքների եվրոպական չափանիշների միատեսակ կիրառության ապահովումը Հայաստանում և ազգային մակարդակում ՄԻԵԿ-ի և ԵՍԽ-ի չափանիշներն ավելի լավ կիրառելու՝ ազգային իշխանությունների կարողության զարգացումը, մասնավորապես.

- Մարդու իրավունքների պաշտպանության նոր՝ 2016-2018թթ. գործողությունների ծրագրի՝ մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխանության վերաբերյալ խորհրդատվություն իշխանություններին, և առաջարկություններ այդ ծրագրի արդյունավետ իրագործման վերաբերյալ,
- Մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշները կիրառելու կարողության զարգացում վճռաբեկ դատարանում,
- Բարձր դատարանների և վերաքննիչ դատարանի, ինչպես նաև՝ առաջին ատյանի դատարանների միջև երկխոսության բարելավում՝ նպատակ ունենալով ապահովել մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշների ավելի միատեսակ կիրառությունը,
- ՄԻԵԿ-ի հիմնական սկզբունքների և չափանիշների հասանելիության և ընկալման բարելավում, ՄԻԵԴ-ի հիմնական նախադեպերի և հրապարակումների թարգմանություն հայերեն, թարգմանված տեքստերի տարածում Հայաստանում՝ աշխատանքային գործընկերների ցանցի շրջանակում,
- Հայաստանի դատական համակարգի կողմից մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշների կատարման և ՄԻԵԴ-ի դատավճիռների կատարման բարելավում,
- Արդարադատության նախարարության, ինչպես նաև՝ Կառավարության լիազոր ներկայացուցչի աշխատակազմի կարողության զարգացում,
- Մարդու իրավունքների թեմաները դասավանդելու՝ Արդարադատության ակադեմիայի կարողության զարգացում,
- Փաստաբանական դպրոցում մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշների հեռակա ուսուցման կարողության ամրապնդում,
- Փաստաբանական դպրոցում և Փաստաբանների պալատում կրթական գործընթացների գործնական մեթոդների կատարելագործում,
- Փաստաբանների պալատին անդամակցող և փաստաբանական պրակտիկա ծավալող փաստաբանների շարունակվող իրավաբանական կրթության կատարելագործում,
- ԵՍԽ-ով երաշխավորված իրավունքների իրականացման ապահովում՝ Հայաստանի օրենսդրության և պրակտիկայի բարեփոխման միջոցով,
- ԵՍԽ-ով նախատեսված՝ կոլեկտիվ գանգատների համակարգի ներդրման համար անհրաժեշտ փոփոխությունների նախաձեռնում օրենքների և պրակտիկայի մեջ,
- ԵՍԽ-ի իրագործման վերաբերյալ ազգային զեկույցներ պատրաստելու՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հմտությունների կատարելագործում:

Ազգային մակարդակում ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի դատական նախադեպի արդյունավետ իրագործման բարելավումը կարևոր գերակայություն է բոլոր անդամ պետությունների՝ ներառյալ Հայաստանի

համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է բարելավել ՄԻԵԿ-ի դատական նախադեպի հասանելիությունը և զարգացնել իրավաբաններին վերապատրաստող կառույցների և դրանցում աշխատող անձանց կարողությունները: Առաջարկվում է այս խնդիրը լուծել՝ հայերեն թարգմանելով ՄԻԵԴ-ի հիմնական նախադեպերը և հրապարակումները, մասնավորապես՝ փոխլրացնող գործունեություն ծավալելով դատական համակարգի, Արդարադատության նախարարության և իրավաբաններին վերապատրաստող կառույցների հետ:

Հայաստանի բարձրագույն դատական ատյանը՝ վճռաբեկ դատարանը, առանցքային դերակատարում պիտի ունենա Հայաստանի դատարաններում ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի դատական նախադեպի միատեսակ կիրառությունն ապահովելու հարցում, որի միջոցով կապահովվի իրավական որոշակիությունը և կանխատեսելիությունը, և կամրապնդվի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Ուստի, առաջարկվում է շարունակել մարդու իրավունքների խնդիրների առնչությամբ վճռաբեկ դատարանի կարողությունների զարգացումը՝ դատական համակարգի ներսում մարդու իրավունքների ստորաբաժանում ստեղծելու և այն ուժեղացնելու, Դատալեքս համակարգի միջոցով դատական նախադեպի հասանելիությունը բարելավելու, ինչպես նաև՝ կլոր սեղանի շուրջ կազմակերպվող քննարկումների և համատեղ սեմինարների շրջանակում վճռաբեկ դատարանի դատավորների և առաջին/վերաքննիչ ատյանների դատավորների միջև երկխոսությունը խորացնելու միջոցով:

Կառավարության լիազոր ներկայացուցչի աշխատակազմը՝ ՄԻԵԴ-ի դատավճիռների կատարման նպատակով վերջերս ստեղծված բաժնով հանդերձ, նույնպես նպաստում է Հայաստանում ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի դատական նախադեպի արդյունավետ կիրառությանը: Այն զբաղվում է ՄԻԵԴ-ում Հայաստանի դեմ ներկայացված գործերով, թարգմանում է Հայաստանի վերաբերյալ դատավճիռները, պատրաստում է դատավճիռների կատարումն ապահովող գործողությունների ծրագրեր և իրավասու է ներկայացնել օրենսդրական փոփոխության առաջարկներ և մարդու իրավունքների վերաբերյալ ՄԻԵԿ-ի չափանիշների և ԽԿԿ-ի հանձնարարականների կատարման վերաբերյալ առաջարկություններ: Հետևաբար, շատ կարևոր է նրանց կարողությունների զարգացումը: Առաջարկվում է շարունակել այդ աշխատանքը՝ ՄԻԵԿ-ին և դատավարական խնդիրներին նվիրված սեմինարների և աշխատանքային հանդիպումների, հատուկ կայքէջ ստեղծելու, կարևոր փաստաթղթերը թարգմանելու և Հայաստանի վերաբերյալ ՄԻԵԴ-ի դատավճիռների ձեռնարկ հրապարակելու միջոցով:

Իրավաբաններին վերապատրաստող ազգային կառույցների՝ արդարադատության ակադեմիայի, փաստաբանական դպրոցի և փաստաբանների պալատի հետ HELP ծրագրի շրջանակում նախաձեռնված համագործակցությունը դատավորներին, դատախազներին, փաստաբաններին, քննիչներին և դատավորների օգնականներին ավելի հասանելի է դարձնում մարդու իրավունքների թեմաներով վերապատրաստումը: ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի դատական նախադեպի վերաբերյալ ուսումնական որոշ դասընթացներ և նյութեր արդեն իսկ պատրաստվել են և տարածվել: Ստեղծել է ուսուցանողների բազա, և կազմակերպվել են սեմինարներ: Այս աշխատանքը շարունակվելու է՝ առանձնակի ուշադրություն դարձնելով HELP-ի հեռակա ուսուցման դասընթացների նախապատրաստմանը և տեղայնացմանը, որի արդյունքում կավելանան մարդու իրավունքների թեմաներով վերապատրաստման հնարավորությունները: Իրավաբանների նախնական և շարունակվող վերապատրաստումը շատ կարևոր է ազգային մակարդակում ՄԻԵԿ-ի և ՄԻԵԴ-ի դատական նախադեպի կիրառությունը բարելավելու տեսանկյունից (տե՛ս Բրյուսելի 2015թ. հռչակագիրը):

1.2 Օժանդակություն քրեական արդարադատության բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ

Քրեական արդարադատության համակարգի բարեփոխման և վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման և դրանց դեմ արդյունավետ պայքարի լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու համար կպահանջվի բարելավված օրենսդրություն, քննության արդյունավետ և գործունակ մեխանիզմ և մեղավորների համարժեք պատիժ: Հիմնական նպատակը լինելու է օժանդակությունը քրեական արդարադատության բարեփոխումներին և պայքարը ոստիկանությունում և զինված ուժերում վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ, մասնավորապես.

- Քրեական գործերին վերաբերող օրենսդրության և վատ վերաբերմունքի դեմ պայքարի կառուցակարգային մեխանիզմների բարելավում և մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապասխան կիրարկում,
- Քրեական վարույթի առանձին հարցերի և մարդու իրավունքների թեմաներով քննիչներին, դատախազներին և դատավորներին վերապատրաստելու՝ արդարադատության ակադեմիայի կարողության զարգացում,
- Քրեական վարույթի առանձին հարցերի և մարդու իրավունքների՝ ներառյալ վատ վերաբերմունքի բողոքների արդյունավետ քննության գիտելիքների և հմտությունների բարելավում քննիչների շրջանում,
- Օժանդակություն զինված ուժերում և ոստիկանությունում վատ վերաբերմունքի բողոքների դեպքերի արդյունավետ քննության համակարգի ներդրմանը,
- Զինված ուժերում և ոստիկանությունում մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովող իրավական դաշտի բարելավում,
- Մարդու իրավունքների եվրոպական չափանիշները կիրառելու՝ զինված ուժերի և ոստիկանության կարողության զարգացում,
- Եվրոպայում համայնքային ոստիկանության աշխատանքի կազմակերպման լավագույն փորձի ներկայացում իշխանություններին՝ ներառյալ առաջարկություններ համայնքային ոստիկանության կարողության զարգացման ուղիների վերաբերյալ:

Ընթացքի մեջ են քրեական արդարադատության համակարգի բարեփոխումները: Ընդունվելու են նոր քրեական օրենսգիրք և նոր քրեական դատավարության օրենսգիրք, որոնք ազգային օրենսդրությունն էլ ավելի են համապատասխանեցնելու եվրոպական չափանիշներին: Դա հատկապես կարևոր է խոշտանգման, վատ վերաբերմունքի և անպատժելիության խնդիրների կապակցությամբ, քանի որ խոշտանգման սահմանումը համապատասխանեցվել է մարդու իրավունքների համապատասխան միջազգային պայմանագրերով նախատեսված սահմանումներին, և անհրաժեշտ է բարելավել վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության երաշխավորման համակարգը: Ուստի, առաջարկվում է ընթացող բարեփոխման շրջանակում աշխատել Արդարադատության նախարարության հետ՝ եզրակացություններ պատրաստելով օրենսդրական նախագծերի տեքստերի վերաբերյալ և ընդունումից հետո օժանդակելով այդ նոր օրենսգրքերի կիրառությանը:

Բացի դրանից, անհրաժեշտ է ամրապնդել հատուկ քննչական ծառայության և ընդհանուր առմամբ քննիչների կարողությունը և անկախությունը: Համագործակցելով արդարադատության ակադեմիայի հետ (որը ներկայումս արդեն պատասխանատու է քննիչների վերապատրաստման համար), մշակվելու են մարդու իրավունքների թեմաներով վերապատրաստման դասընթացներ և նյութեր, և կազմակերպվելու են վերապատրաստման աշխատանքներ:

Համապատասխան օրենսդրական փորձաքննությունը և մարդու իրավունքներին առնչվող կարողության զարգացումը, մասնավորապես՝ վատ վերաբերմունքի դեպքերն արդյունավետորեն քննելու թեմայով վերապատրաստման դասընթացները, նույնպես տեղի են ունենալու Պաշտպանության նախարարության, զինված ուժերի և ոստիկանության հետ համատեղ՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությանը համահունչ: Օժանդակություն կցուցաբերվի նաև զինված ուժերի ներսում բողոքարկման անկախ մեխանիզմի ձևավորմանը:

1.3 Գենդերային հավասարություն, պայքար կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ, պայքար խտրականության դեմ

Խթանել գենդերային հավասարությունը և պայքարել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ, օժանդակել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործընթացներին, մասնավորապես.

- Արդարադատության համակարգի գործընթացներում գենդերային առանձնահատկությունների ներառում և առավել անբարենպաստ վիճակում հայտնված կանանց՝ ներառյալ գյուղաբնակ կանանց պահանջմունքների բավարարում,
- Կանանց համար արդարադատության հավասար հասանելիությունը երաշխավորող իրավական դաշտի և քաղաքականության բարելավում,
- Օժանդակություն խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենքի մշակման՝ ներկայումս ընթացող աշխատանքին և օրենքի ընդունմանը,
- Արդարադատության համակարգի գործընթացների տարբեր փուլերում ներգրավված մասնագետների (իրավապահ մարմինների ներկայացուցիչների, քննիչների, դատախազների, դատավորների, փաստաբանների) շրջանում գենդերային հավասարության, կանանց իրավունքների և խտրականության դեմ պայքարի գիտելիքների և հմտությունների կատարելագործում,
- Կանանց և տղամարդկանց միջև հավասարության մշտադիտարկման և գնահատման միջոցառումների իրականացում և բարելավման մեխանիզմների ներդրում,
- Կանանց իրավազորելու համար անհրաժեշտ գիտելիքների և ռեսուրսների հասանելիության բարելավում քաղաքացիական հասարակության շարքերում գենդերային հավասարության ջատագովների շրջանում,
- Աջակցություն իշխանություններին թրաֆիքինգի նկատմամբ խոցելի խմբերի, հատկապես՝ ռիսկի ենթակա խմբերի համար իրազեկությունը բարձրացնելու և կրթման հասցեական միջոցառումներ մշակելու գործում,
- Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին ԵԽ-ի կոնվենցիայի (CETS No.: 210) վերաբերյալ իրազեկության բարձրացում՝ այդկերպ նրանց հնարավորություն ընձեռելով առավել իրազեկված որոշումներ կայացնել Կոնվենցիայի հնարավոր ստորագրման և վավերացման մասին,
- Թրաֆիքինգի, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության խնդիրների լուծման մեխանիզմների բարելավում ոստիկանության կողմից:

Մարդու իրավունքների հանձնակատարի՝ 2014 թվականին Հայաստան կատարած այցելության արդյունքներին հետամուտ լինելու առումով միջամտություններ են անհրաժեշտ գենդերային հավասարության խթանման և ընտանեկան բռնության դեմ պայքարի ոլորտներում: Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ինչպես նաև՝ ընտանեկան բռնության դեմ պայքարի ներկայիս իրավիճակի և իրականացված հասցեական ծրագրերի վերաբերյալ հետազոտություններ է անհրաժեշտ իրականացնել՝ մշակելով մոտակա տարիների գերակա ուղղությունների վերաբերյալ առաջարկների փաթեթը: ԵԽ-ի և Հայաստանի միջև համագործակցության հիմնական ուղղություններն են լինելու գենդերային հավասարության և կանանց իրավունքների վերաբերյալ հանրության լայն շրջանակների իրազեկության բարձրացումը, գենդերային հավասարության խթանման և կանանց իրավունքների խթանման նպատակով ՀԿ-ների և իշխանությունների միջև առավել սերտ աշխատանքային հարաբերությունների ձևավորումը: Քննիչների, դատախազների, դատավորների և դատական ծառայողների, ինչպես նաև՝ փաստաբանների համար անհրաժեշտ է վերապատրաստումներ կազմակերպել՝ թրաֆիքինգի և ընտանեկան բռնության դեմ պայքարի և խտրականության

նկատմամբ զրոյական հանդուրժողության եվրոպական և միջազգային չափանիշների թեմաներով:

Հետամուտ լինելով Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի՝ Հայաստանի կողմից իրագործման վերաբերյալ զեկույցին (GRETA (2012)8) և դրա վերաբերյալ հետագայում Հայաստանի իշխանությունների ներկայացրած մեկնաբանություններին, առաջարկվում է օժանդակել ոստիկանությանը և Արդարադատության նախարարությանը՝ թրաֆիքինգի նկատմամբ խոցելի խմբերի, հատկապես՝ կանանց և մանկախնամ հաստատություններում բնակվող երեխաների և երիտասարդների համար իրազեկության բարձրացման և կրթման հասցեական միջոցառումների մշակման ջանքերում:

ԵԽ-ն նաև աջակցելու է ոստիկանությանը՝ թրաֆիքինգի, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ համարժեք պայքարի մեխանիզմներ մշակելու գործում:

1.4 Արտահայտվելու/լրատվամիջոցների ազատության ամրապնդում

Բարձրացնել ազգային օրենսդրության, լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի և գործելակերպի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մակարդակը, մասնավորապես.

- Հայաստանում գործող ինքնակարգավորման մարմինների տեսանելիության, վերաբերելիության և արդյունավետության բարելավում,
- Օժանդակություն լրատվամիջոցների ազատության խնդիրներով զբաղվող ՀԿ-ների և պետական մարմինների միջև համագործակցության ձևավորմանը և խորացմանը,
- Հանրային հեռարձակողի անկախությունն ապահովելու համար Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների չափանիշների և առկա գործելակերպի վերաբերյալ պատգամավորների իրազեկության բարձրացում՝ հանրային հեռարձակողի ֆինանսավորման և ծրագրերի վերաբերյալ պատգամավորներին տրվող որոշակի առաջարկությունների/ուղենիշների արդյունքում,
- Ազգային օրենսդրության և լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մակարդակի բարձրացում, հատկապես հետևյալ ոլորտներում. հանրային հեռարձակում, լրատվամիջոցների գործունեությունը կարգավորողների անկախություն, հանրային տեղեկատվության հասանելիություն, լրատվամիջոցների սեփականության կենտրոնացվածություն և թափանցիկություն, ինչպես նաև արտահայտվելու ազատություն՝ ներառյալ ինտերնետում,
- Ազգային օրենսդրության և լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մակարդակի բարձրացում՝ լրագրողների պաշտպանության համակարգի բարելավման նպատակով,
- Լրագրողների իրավունքների և մասնագիտական էթիկայի թեմաներով լրագրողների վերապատրաստումների բարելավում,
- Օժանդակություն բարձրագույն ուսումնական հաստատություններում լրագրողների մասնագիտական պատրաստման բարելավմանը:

Եվրոպայի խորհրդի և Հայաստանի միջև համագործակցության արդյունքում ձևավորված և լրատվամիջոցների ազատությանը նպաստող դրական փոփոխությունները մնայուն դարձնելու համար անհրաժեշտ կլինի հավուր պատշաճի իրագործել լրատվամիջոցներին առնչվող իրավական դաշտը, պահպանել լրագրողների մասնագիտական պատրաստման բարձր չափանիշները և աջակցել պետական մարմինների և քաղաքացիական հասարակության միջև

համագործակցությանը: Խորհրդարանական վեհաժողովը 2013թ. բանաձևում կրկնեց, որ ընտրություններից առաջ և ընտրությունների ընթացքում կենսական կարևորություն ունի արտահայտվելու ազատությունը: ԵԽԽՎ-ն կոչ արեց Հայաստանին՝ քայլեր ձեռնարկել ընտրությունների դիտարկման վերջին զեկույցներում մատնանշված թերությունները հաղթահարելու ուղղությամբ: Գործողությունների ծրագիրն աջակցելու է հետևյալ ոլորտներում ազգային օրենսդրության և լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մակարդակի բարձրացմանը. հանրային հեռարձակողի գործունեություն, լրատվամիջոցների գործունեությունը կարգավորողների անկախություն, հանրային տեղեկատվության հասանելիություն, լրատվամիջոցների սեփականության կենտրոնացվածություն և թափանցիկություն:

1.5 Տվյալների պաշտպանություն

Կատարելագործել և զարգացնել տվյալների պաշտպանության ազգային համակարգերը, մասնավորապես.

- Տվյալների պաշտպանության մասին օրենսդրության, իրավական այլ ակտերի և քաղաքականության ընդգրկման շրջանակի ընդլայնում՝ տվյալների պաշտպանության միջազգային և եվրոպական չափանիշներին համահունչ,
- Վերահսկող մարմնի կողմից իրականացվող վերահսկողության խստացում՝ անհատների համար երաշխավորելով պաշտպանության ամենաբարձր մակարդակը,
- Իրավաբանների և այլ մասնագետների (ներառյալ դատավորների, դատախազների, փաստաբանների և քննիչների)՝ տվյալների պաշտպանությանը վերաբերող օրենսդրությունը կիրառելու կարողությունների զարգացում:

ԵԽ-ն օժանդակել է 2015թ. մեկնարկած՝ Հայաստանի էլեկտրոնային նոտար համակարգի ստեղծման աշխատանքներին: 2015թ. մարտին Հայաստանի ազգային ժողովն ընդունեց անձնական տվյալների պաշտպանության մասին օրենքում առաջարկված փոփոխությունները: Անհատների պաշտպանության ամենաբարձր մակարդակն ապահովելու համար տվյալների պաշտպանության օրենսդրության արդյունավետ իրագործման հարցում ԵԽ-ն շարունակելու է աջակցել Հայաստանի իշխանություններին, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության նորաստեղծ գործակալությանը: Գերակա ուղղություն է տվյալների պաշտպանության օրենսդրության և պրակտիկայի տարբեր առանձնահատկությունների վերաբերյալ իրավաբանների վերապատրաստումը:

2. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գործողությունների ծրագրում հաշվի են առնվել Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագիրը և Հայաստանում սպասվող սահմանադրական բարեփոխումները: Եվրոպայի խորհուրդը կաշխատի Հայաստանի իշխանությունների հետ իրավական և դատական բարեփոխումների հաջորդ ռազմավարական ծրագրի վրա, իսկ դրա ընդունումից հետո ԵԽ-ն կօժանդակի դրա իրագործմանը: ԵԽ-ի և Հայաստանի իշխանությունների միջև համագործակցությունը կենտրոնանալու է հետևյալ ուղղություններով.

- Սահմանադրության դրույթների և դրանց ուղղակի կիրառության համապատասխանեցումը ԵԽ-ի չափանիշներին և անդամ պետությունների լավագույն փորձին,
- ԵԽ-ի օժանդակությունը վերջին շրջանում փոփոխվող օրենսդրության (քաղաքացիական օրենսգիրք, քաղաքացիական դատավարության օրենսգիրք, վարչական

իրավախախտումների մասին օրենսգիրք, սնանկության մասին օրենք, դատավորի վարքագծի կանոնագիրք) իրագործմանը,

- Ընդունված օրենսդրության իրագործմանն օժանդակող կանոնների և ընթացակարգերի մշակում ենթաօրենսդրական ակտերի տեսքով,
- Հայաստանում հաշտարարության մեխանիզմների և արբիտրաժային համակարգի կատարելագործում,
- Օժանդակություն դատավորների հաշվետու գործելակերպի բարեփոխումներին՝ ներառյալ դատական համակարգում կոռուպցիայի կանխարգելման և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ, Եվրոպայի խորհրդի չափանիշներին և հանձնարարականներին համահունչ,
- Օժանդակություն պրոբացիայի ծառայության ստեղծմանը,
- Քրեակատարողական համակարգի, մասնավորապես՝ առողջապահության, վաղաժամկետ ազատման, ցմահ ազատազրկման հետ կապված օրենսդրական դաշտի և գործելակերպի կատարելագործում, քրեակատարողական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի մշակման աշխատանքների բարելավում,
- Օժանդակություն ոստիկանության բարեփոխումների գործընթացին:

Նախագահի կողմից 2012թ. հուլիսի 2-ին ստորագրված հրամանագրով հաստատված՝ Իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի ընդունմամբ Հայաստանում նախաձեռնվել են արդարադատության համակարգի լայնածավալ բարեփոխումներ: Բարեփոխման նախաձեռնության նպատակն է երաշխավորել անկախ և հաշվետու դատական համակարգի գործունեությունը, բարելավել քրեական արդարադատության արդյունավետությունը և քրեական պատիժների համակարգը, վարչական արդարադատությունը, վարչական վարույթը, քաղաքացիական արդարադատությունը և դատավարական գործառույթների կատարումը: Ռազմավարական ծրագրով նաև սահմանվում են մի շարք իրավական ակտերի վերանայման ժամկետները և առաջարկվող փոփոխությունների կատարման համար պատասխանատու մարմինները:

Հայաստանի Նախագահին առընթեր ստեղծված՝ Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը 2014թ. մարտին և ապրիլին հրապարակեց Սահմանադրական փոփոխությունների առաջարկվող հայեցակարգը: Սահմանադրության վեց գլուխներում փոփոխությունների նախագիծը հրապարակվեց 2015թ. հուլիսին, իսկ հուլիսի 31-ին Վենետիկի հանձնաժողովը հրապարակեց նախագծի վերաբերյալ իր նախնական եզրակացությունը (CDL-PI(2015)015): Առաջարկվող սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն անցկացվելու է 2015 թվականի տարեվերջին/2016 թվականի տարեսկզբին: Հայեցակարգը և փոփոխությունների նախագիծը բաց են եղել հանրային քննարկումների համար: Վենետիկի հանձնաժողովը ներկայացրել է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ իր եզրակացությունը (CDL-AD(2014)027) և փոփոխությունների նախագծի վերաբերյալ իր նախնական եզրակացությունը:

Գործողությունների ծրագրի շրջանակում այս առումով օժանդակություն կցուցաբերվի սահմանադրական բարեփոխումների գործընթացին՝ նպատակ ունենալով ապահովել սահմանադրական փոփոխությունների համապատասխանությունը եվրոպական չափանիշներին, հատկապես արդարադատության ոլորտում: Սահմանադրական փոփոխությունների ընդունումից հետո անհրաժեշտության դեպքում կառաջարկվի նաև դատական համակարգին առնչվող ազգային օրենսդրության վերանայում:

Հայաստանի արդարադատության համակարգում ընթացող բարեփոխումների կարևորագույն տարրերից է դատական համակարգի անկախության մակարդակի բարձրացումը:

2014թ. մարտին Վենետիկի հանձնաժողովը Մարդու իրավունքների տնօրինության հետ միասին համատեղ եզրակացություն ընդունեց Հայաստանի դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ, որով նախատեսվում էր ստեղծել դատավորների գնահատման համակարգ և բարելավել դատավորների հաշվետու գործելակերպի ապահովման համակարգը: Դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների միջոցով հարցազրույցները և գրավոր քննությունն ավելի թափանցիկ դարձնելու արդյունքում որոշակիորեն բարելավվել են դատավորի թեկնածուների որակավորման քննությունները:

Դատավորների նշանակման, առաջխաղացման և կարգապահական պատասխանատվության ներկայիս ընթացակարգերի, ինչպես նաև դատական համակարգի ֆինանսավորման մեխանիզմի վերանայումն անհրաժեշտ է շարունակել՝ բացառելու համար արտաքին ազդեցությունը դատավորների նշանակման և պաշտոնից հեռացման վրա կամ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների վրա:

ԵԽ-ն ակտիվորեն աշխատում է էթիկայի և կարգապահական հարցերի նորաստեղծ հանձնաժողովի և Դատավորների գնահատման նորաստեղծ հանձնաժողովի հետ՝ հասանելի դարձնելով ԵԽ-ի անդամ այլ պետությունների լավագույն փորձը, հանդիպումներ կազմակերպելով գործընկեր կառույցների հետ, և իրականացնելով Հայաստանի դատավորների վարքագծի կանոնների և Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի նորաստեղծ հանձնաժողովի կանոնակարգերի փորձաքննությունը:

Հաջորդ գերակա ուղղությունն է դատավորների ինքնակառավարման մարմինների լիազորությունների և իրավասությունների ամրապնդումը և հավասարակշռումը (Դատարանների նախագահների խորհրդի և Դատավորների ընդհանուր ժողովի գործունեությունը և նրանց միջև գործառույթների բաշխումը):

Դատավորների ինքնակառավարման մարմինների արդյունավետությունն ազդում է դատավորների ներքին անկախության վրա: Այս խնդիրն արծարծվել է Անկախ դատական համակարգի հարցերով աշխատանքային խմբի կողմից՝ Արևելյան գործընկերության պետություններում դատական բարեփոխումների խորացման ծրագրի վերաբերյալ 2013թ. զեկույցում:

2014 թվականին ստեղծելով արդարադատության ակադեմիան՝ Հայաստանն ինստիտուցիոնալ բնույթ հաղորդեց դատական համակարգի նախնական վերապատրաստման ծրագրերին: Դատավորների նախնական և ընթացիկ վերապատրաստումների ուսումնական ծրագրերը չեն ներառում դատարանների գործունեության մոնիթորինգին (վիճակագրության վերլուծություն, դատական ցուցանիշներ, վարույթների տևողության մոնիթորինգ, դատարաններից օգտվողների հետազոտություններ) նվիրված հատուկ դասընթացներ: Այս խնդիրը լուծելու՝ գործող դատավորների և դատավորի թեկնածուների հմտությունների կատարելագործումն ընդհանուր առմամբ կնպաստի ազգային դատարանների գործունեության բարելավմանը և CEPEJ-ի սահմանած հենանիշներին և ցուցանիշներին դրա համապատասխանության ապահովմանը:

ԵԽ-ն աջակցել է մի շարք իրավական ակտերի, մասնավորապես՝ քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի, վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի, սնանկության մասին օրենքի, դատավորի վարքագծի կանոնագրքի և էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կանոնակարգի վերանայմանը: Գործողությունների սույն ծրագրի գերակայություններից են ընդունված օրենսդրության իրագործումը և մոնիթորինգը,

ինչպես նաև՝ ընդունված օրենքների իրագործմանն օժանդակող կանոնների և ընթացակարգերի մշակումը ենթաօրենսդրական ակտերի տեսքով:

ԵԽ-ի գործունեության հաջորդ գերակա ուղղությունը վեճերի այլընտրանքային լուծումն է (ՎԱԼ): Միջազգային և ազգային փորձագետների աշխատանքային խմբերն ուսումնասիրել են իրավական դաշտը և դրա գործնական կիրառությունը և բացահայտել են Հայաստանի ՎԱԼ համակարգում առկա հիմնական գործնական խնդիրները և մարտահրավերները: 2015թ. հունիսին փոփոխություններ են ընդունվել առևտրային արբիտրաժի մասին օրենքում, որոնցով ընդլայնվել են արբիտրաժի շրջանակը և ձևերը:

2015թ. մայիսին փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի քաղաքացիական դատավարության օրենսգրքում (և մի շարք այլ իրավական ակտերում), որոնցով ինստիտուցիոնալ հիմքերի վրա է դրվել դատարանին առընթեր հաշտարարությունը: Օրենքը լուրջ հիմք է Հայաստանում հաշտարարությունն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու համար: ԵԽ-ի փորձագետների թիմն առաջարկություններ է ներկայացրել, որոնք ներառվել են նախագծում: Առևտրային արբիտրաժի մասին օրենքում կատարված փոփոխությունները մշակվել են արբիտրաժի հարցերով աշխատանքային խմբի կողմից և ԵԽ-ի առաջարկությունների հետ միասին ներկայացվել են Արդարադատության նախարարությանը:

Արդարադատության նախարարությանը ներկայումս օժանդակություն է անհրաժեշտ օրենսդրության մեջ (քրեակատարողական օրենսգրքում, ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին օրենքում, ենթաօրենսդրական ակտերում, ներքին կանոնակարգերում և այլն) առկա բացերը հայտնաբերելու ուղղությամբ: Օրենսդրությունը վերանայելու անհրաժեշտությունը բացատրվում է, ի թիվս այլոց, այն փաստով, որ մշակվել և խորհրդարան է ուղարկվել քրեական դատավարության նոր օրենսգիրքը, սկիզբ է առել քրեական նոր օրենսգրքի մշակումը, իսկ պրոբացիայի վերաբերյալ օրենսդրական փաթեթը մշակվել է և նախքան խորհրդարան ներկայացվելը սպասում է Կառավարության հաստատմանը:

Ազգային իշխանությունների հետ քննարկումներից հետո առանձնացվել են քրեակատարողական համակարգի բարեփոխումների հետևյալ գերակա ուղղությունները. օժանդակություն Հայաստանի իշխանություններին պրոբացիայի ծառայության ստեղծման և բանտային առողջապահական ծառայությունների բարելավման գործում, օրենսդրության վերանայման միջոցով բանտային առողջապահական աշխատողների մասնագիտական անկախության մակարդակի բարձրացում, բանտերի առողջապահական բաժինների նյութական պայմանների բարելավում՝ եվրոպական չափանիշներին համահունչ, ինչպես նաև՝ առողջապահական ծառայությունների մատուցման, բժշկական էթիկայի և մարդու իրավունքների ոլորտներում բանտերում աշխատողների կարողությունների զարգացում:

Քրեական պատիժների կատարման գործընթացի պատժողական բնույթը վերականգնողականի վերածելու նպատակով անհրաժեշտ է լուծել բանտերի գերբնակեցման խնդիրը:[1] Գերբնակեցման կրճատման համար խորհուրդ տրվող մեխանիզմներից է համայնքային պատիժների և այլ միջոցների առավել արդյունավետ և հասցեական կիրառումը: Հայաստանում վերջերս արձանագրվել է խիստ պատժողական արդարադատության համակարգից վերականգնողականի անցում կատարելու միտումը: Նշված բարեփոխումների նպատակն է կրճատել բանտարկության բարձր ցուցանիշը, ինչպես նաև բանտերում գերբնակեցման հանգեցնող՝ կրկնահանցավորության

[1] ԵԽ-ի բանտային վարչությունների տնօրենների 19-րդ խորհրդաժողովում վերստին ընդգծվեց, որ ազատազրկումը՝ բանտարկումը, պետք է հնարավոր միջոցներից վերջինը լինի, և որ բանտարկումը պետք է սահմանափակվի միայն այն դեպքերով, որոնցում անձի կատարած հանցանքը կամ կասկածվող հանցանքն այնքան ծանր է, որ ազատազրկումն արժանի պատիժ է դրա համար:

բարձր մակարդակը:[2] Բանտերում առկա և ԽԿԿ-ի զեկույցներում արձանագրված խնդիրները մասամբ պայմանավորված են օրենսդրական բացերով (տե՛ս CPT/Inf (2012) 23 և CPT/Inf (2011) 24):

Հիմնավորումների աղբյուրները.

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանին վերաբերող դատական նախադեպ, Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը (թիվ 757 / 2014) Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի զեկույցը (CommDH(2015)2, 2015թ. մարտի), Եվրոպայի խորհրդի Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (CPT) զեկույցները Հայաստանի վերաբերյալ (2011թ., 2013թ., 2014թ.), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավճիռների կատարման վարչության (EXEC) փաստաթղթերը Հայաստանի վերաբերյալ, Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի (CEPEJ) կողմից Հայաստանի գնահատման գործընթացը (2014թ.), Ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի (GR-DEM) ենթախմբի պատվիրակության կողմից Հայաստան կատարած այցի զեկույցը Եվրոպայի խորհրդի նկատմամբ Հայաստանի հանձնառությունների կատարման առաջընթացի վերաբերյալ (GR-DEM(2013)3, 26-ը ապրիլի, 2013թ.):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Աշխատել Հայաստանում դատական համակարգի լիարժեք գործունեությունն ապահովելու ուղղությամբ՝ կիրառելի եվրոպական չափանիշներին համապատասխան:

ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2.1 Սահմանադրական բարեփոխումներ

Սահմանադրական բարեփոխումների նախագծի դրույթները համապատասխանեցնել ԵԽ-ի չափանիշներին և հանձնարարականներին, մասնավորապես.

- Ինքնակառավարման մարմինների կազմին, լիազորություններին և գործառույթներին վերաբերող սահմանադրական դրույթների նախագծի համապատասխանություն ԵԽ-ի չափանիշներին և հանձնարարականներին,
- Սահմանադրական դատարանի՝ արդարադատություն իրականացնելու կարողության զարգացում:

Հայաստանում ընթացող սահմանադրական բարեփոխման նպատակն է երկիրն ավելի մոտեցնել Եվրոպայի խորհրդի արժեքների լիարժեք իրագործմանը: Բարեփոխումը հիմնվելու է 2005 թվականին իրականացված սահմանադրական բարեփոխման հենքի վրա՝ շտկելով դրա կատարման ընթացքում ի հայտ եկած թերությունների մի մասը: Ինչպես նշվել է սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի թիվ 757/2014 եզրակացության մեջ, «համապարփակ սահմանադրական բարեփոխումը կարող է իրականացվել միայն հասարակության հետ լայն կոնսենսուսի հիման վրա»: Գործողությունների ծրագիրն օժանդակելու է բարեփոխման գործընթացին, մասնավորապես, հիմնական

[2] 100,000 բնակչի հաշվարկով բանտարկյալների թվի առումով (2013 թվականին Հայաստանում այդ թիվը եղել է 160) Հայաստանը մոտ է Եվրոպայի միջինին, այն է՝ 149.9 (աղբյուրը՝ Space I 2012): Վիճակագրական այս տվյալի հիմքում դրված է 2013թ. մայիսի դրությամբ Հայաստանի բնակչության 2.98 միլիոնի հաշվարկային ցուցանիշը՝ ՄԱԿ-ի տվյալներով և Արդարադատության նախարարության կողմից 2013թ. մայիսի 24-ին տրամադրված տվյալներով: Աղբյուրը՝ International Prison Studies:

իրավունքներին և ազատություններին առնչվող ոլորտներում՝ սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի իրագործման, իշխանությունների բաժանման և հավասարակշռման, ընտրական համակարգի, դատական համակարգի և տեղական ինքնակառավարման իրավական բարեփոխումների ուղղություններով: Սերտորեն համագործակցելով Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով հետ՝ ԵԽ-ն աջակցելու է իշխանություններին օրենսդրությունը մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան վերանայելու գործում:

2.2 Դատական բարեփոխումներ

ԵԽ-ի չափանիշներին համահունչ ապահովել դատական անկախությունը, իրավական վարույթների արդյունավետությունը և արդարադատության հասանելիությունը, հետևել դատական բարեփոխումների վրա ազդելու հնարավորություն ունեցող զարգացումներին և երկարաժամկետ հատվածում օժանդակել Հայաստանին այդ բարեփոխման իրագործման հարցում: Բարելավել երկրի օրենսդրությունը՝ այդկերպ աջակցելով Հայաստանի արդարադատության համակարգի՝ ԵԽ-ի չափանիշներին ներդաշնակեցմանը, մասնավորապես.

- Ինքնակառավարման մարմինների թափանցիկ և հաշվետու համակարգ՝ հիմնվելով դատավորների հավասարության սկզբունքի վրա, և ինքնակառավարման մարմինների աշխատանքում դատարանների նախագահների դերի կրճատում,
- Վերջերս փոփոխված օրենսդրության՝ քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, սնանկության մասին օրենքի, դատավորի վարքագծի կանոնագրքի իրագործում՝ ԵԽ-ի անդամ պետությունների լավագույն փորձին համահունչ,
- Ընդունված օրենսդրության իրագործմանն օժանդակող ենթաօրենսդրական ակտերի և ընթացակարգերի մշակում,
- Հեռակա ուսուցման գործիքների և առցանց դասընթացների ներդրում Արդարադատության ակադեմիայի համար,
- Օժանդակություն Հայաստանում հաշտարարության մեխանիզմների և արբիտրաժի համակարգի կատարելագործմանը և արդյունավետ գործունեությանը,
- Վեճերի լուծման այլընտրանքային մարմինների կարողության զարգացում:

Քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը նույնպես կնպաստի Հայաստանի արդարադատության համակարգի ազատականացմանը՝ շնորհիվ տարբեր իրավախախտումների սահմանումների, ինչպես նաև՝ սահմանվող պատիժների փոփոխությունների, որոնց արդյունքում ավելանալու է այլընտրանքային պատժատեսակների կիրառությունը: Փաստաբանության մասին օրենքում առաջարկվել են փոփոխություններ, որոնք կնպաստեն երկրում անվճար իրավաբանական օգնության համակարգի բարելավմանը:

2.3 Քրեակատարողական բարեփոխումներ

Բարելավել առողջապահական համակարգը բանտերում և աջակցել քրեակատարողական օրենսդրության վերանայմանը, մասնավորապես.

- Բանտերում առողջապահական ծառայությունների մատուցման իրավական և ինստիտուցիոնալ դաշտի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին, բանտերում մատուցվող առողջապահական ծառայությունների (հատկապես կենտրոնանալով ցմահ ազատազրկվածների և այլ խոցելի խմբերի՝ կանանց և անչափահասների ուղղությամբ) բարելավում և համապատասխանեցում եվրոպական չափանիշներին, բանտերում առողջապահական ծառայությունների նյութական

պայմանների բարելավում, բանտերի բուժական և ոչ բուժական աշխատողների վերապատրաստում բանտերում առողջապահության, մարդու իրավունքների և բժշկական էթիկայի եվրոպական չափանիշների թեմաներով:

Եվրոպայի խորհրդի Խոշտանգման և անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեն (CPT) արտահերթ այցեր է կատարել Հայաստան 2013թ. ապրիլին և 2014թ. մայիսին: Նախկին զեկույցներում արձանագրված խնդիրներից են կալանքի ընթացքում նվաստացուցիչ վերաբերմունքը և կալանքի անբավարար պայմանները: Այս և այլ խնդիրները քննարկելով երկրի իշխանությունների հետ՝ քրեակատարողական բարեփոխման ոլորտում առանձնացվել են ապագա համագործակցության հետևյալ գերակա ուղղությունները.

- Առողջապահությունը բանտերում. բանտերի առողջապահական աշխատողների մասնագիտական անկախության ավելացման նախատեսում, բանտերի առողջապահական ծառայությունների նյութական պայմանների բարելավում, ինչպես նաև բանտերում աշխատող անձանց՝ առողջապահական ծառայությունների մատուցմանը, բժշկական էթիկային և մարդու իրավունքներին առնչվող կարողությունների զարգացում: Այս գերակայություններն ընդգրկվելու են Արևելյան գործընկերության ծրագրային համագործակցության կառուցակարգի (PCF) ներքո պետության համար մշակվող հատուկ ծրագրում՝ «Քրեակատարողական բարեփոխումը՝ Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագրում,
- Քրեակատարողական օրենսդրության վերանայում և օրենսդրական բարեփոխումների առաջմղում (քրեակատարողական օրենսգիրք, ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին օրենք, ենթաօրենսդրական ակտերում, ներքին կանոնակարգեր և այլն). Արևելյան գործընկերության ծրագրային համագործակցության կառուցակարգի (PCF) «Քրեակատարողական բարեփոխման խթանումը» տարածաշրջանային ծրագրով այս ոլորտում աջակցություն կցուցաբերվի Հայաստանի իշխանություններին:

2.4 Պրոբացիա

Աջակցել պրոբացիայի ծառայության ստեղծմանը՝ Եվրոպայի խորհրդի առաջարկություններին համահունչ, մասնավորապես.

- Պրոբացիայի ծառայության մեթոդների ներդրում՝ միջազգային փորձագիտական օգնություն ցուցաբերելով օրենսդրական փաթեթի մշակմանը և տեխնիկական օժանդակություն ցուցաբերելով Հայաստանի երկու փորձնական մարզերում պրոբացիայի ծառայության ստեղծմանը՝ կիրառելով Եվրոպայի խորհրդի չափանիշները և եվրոպական լավագույն փորձը,
- Համապատասխան մասնագիտական խմբերի՝ պրոբացիայի օրենսդրությանը և պրակտիկային առնչվող կարողությունների զարգացում:

Պրոբացիայի ծառայության՝ Եվրոպայի խորհրդի առաջարկություններին համահունչ ստեղծումը կարևոր քայլ կլինի երկրում ազատազրկում չառաջացնող պատիժների և այլ միջոցների ներդրման ուղղությամբ, այդ թվում՝ նախնական կալանքի առնչությամբ: «Աջակցություն Հայաստանում պրոբացիոն ծառայության ստեղծմանը» ծրագրի շրջանակում տեխնիկական օժանդակություն է ցուցաբերվում պրոբացիայի ծառայությունների փորձարկմանը՝ ներառյալ էլեկտրոնային մոնիթորինգի փորձնական համակարգի ձևավորմանը, Հայաստանում փորձնական ծրագրի իրականացման երկու վայրերի պրոբացիոն ծառայության աշխատողների և հարակից այլ մասնագետների վերապատրաստմանը և պրոբացիային առնչվող օրենսդրական նախագծերի փորձաքննությանը: Ազատազրկում չառաջացնող պատիժների, վաղաժամկետ ազատման և պրոբացիայի ոլորտում Հայաստանի ներկայիս իրավիճակի մանրակրկիտ գնահատումը և փոփոխության և բարեփոխման կարիքների վերաբերյալ առաջարկությունները

ներկայացվել են իշխանություններին: Հիմնվելով այդ արդյունքների վրա՝ ԵԽ-ն շարունակելու է աջակցել իշխանություններին և մասնավոր հատվածին օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործառնական բարեփոխումներում՝ Պրոբացիայի եվրոպական կանոններին և այս ոլորտում Եվրոպայի խորհրդի այլ հանձնարարականներին և առաջարկություններին համահունչ:

3. ՊԱՅՔԱՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ոլորտում գերակայություններն են.

- Պայքարը կոռուպցիայի դեմ (ներառյալ՝ բարձրագույն կրթության ոլորտում) և փողերի լվացման դեմ, էթիկայի հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողության զարգացումը, և
- Պայքարը կիբեռհանցավորության դեմ:

2011 թվականին Հայաստանի Հանրապետությունը միացել է Բաց կառավարման գործընկերության (OGP) նախաձեռնությանը: Վերջինիս կարևոր տարրերից են պայքարը հանուն բարեվարքության, պայքարը կոռուպցիայի դեմ: Հայաստանի կառավարությունը 2015-2018թթ. ժամանակահատվածի համար հակակոռուպցիոն նոր ռազմավարություն և գործողությունների ծրագիր է պատրաստում: Ռազմավարության հիմնական նպատակն է հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարը: Ռազմավարությունն անդրադառնալու է հանրային կառավարման արդյունավետ, թափանցիկ և հաշվետու համակարգի կայացման հիմնախնդիրներին: Նախնական համաձայնություն է ձեռք բերվել հասցեական չորս ոլորտներում՝ կրթության, առողջապահության, պետական եկամուտների հավաքագրման և ոստիկանության գործունեության ոլորտներում ռիսկի գնահատում իրականացնելու շուրջ: Ռիսկերի գնահատման արդյունքների և առաջարկությունների հիման վրա ռազմավարության և գործողությունների ծրագրի նախագիծը կվերանայվեն: Ներկայումս քննարկվում է ռազմավարության մեջ սոցիալական ոլորտը և արդարադատության ոլորտը ներառելու նպատակահարմարությունը: Ռազմավարության գերակայություններից է կրթական ոլորտը:

Եվրոպայի խորհրդի կրթության նախարարների մշտական խորհրդաժողովի՝ կառավարման և որակյալ կրթության խորագրով անցկացված 24-րդ նստաշրջանում (Հելսինկի, 2013թ. ապրիլ) Հայաստանն ստորագրել է Կրթության ոլորտում էթիկայի և բարեվարքության համաեվրոպական հարթակի ձևավորման վերաբերյալ նախարարների հռչակագիրը: Հայաստանը նաև իրագործում է Կրթության որակի ապահովման մասին Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2012)13 հանձնարարականը: Հայաստանի կառավարության 2014-2015թթ. զարգացման ռազմավարությունը նույնպես պարունակում է կոռուպցիայի դեմ պայքարին նվիրված հատուկ բաժին, որը հիմնականում անդրադառնում է կրթության ոլորտին, պետական եկամուտներին, ոստիկանությանը և առողջապահական ոլորտին: Հայաստանի կրթության և գիտության նախարարությունը մշակել է կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2013-2014թթ. միջոցառումների ծրագիր: Վերջինիս իրագործումը և միջոցառումների նոր՝ 2014-2016թթ. ծրագրի մշակումը կարևոր քայլեր են կրթության ոլորտում բարեվարքության ամրապնդման ուղղությամբ կառավարության կողմից գործադրվող ջանքերում: Հայաստանի՝ որպես 2012-2015թթ. ընթացքում Բոլոնիայի քարտուղարությունը (Բարձրագույն կրթության եվրոպական տարածք) նախագահած պետության օրակարգում կարևոր գերակայություն է բարձրագույն կրթությունը: Գնալով ավելի ակնհայտ է դառնում, որ բարձրագույն կրթության համակարգում Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի սկզբունքներին համահունչ կառուցվածքային բարեփոխումներ իրականացնելն անհնար կլինի, եթե աշխատանք չտարվի բարձրագույն ուսումնական հաստատությունների լիարժեք ինստիտուցիոնալ ինքնուրույնության և ակադեմիական ազատության ապահովման ուղղությամբ:

Հայաստանը միացել է Կիբեռհանցավորության դեմ պայքարի մասին Բուդապեշտի կոնվենցիային, ստեղծել՝ միջազգային համագործակցության հրատապ հարցերով կապերի 24-ժամյա պատասխանատուների ինստիտուտ: Հայաստանի ոստիկանությունը և դատական մարմինները, որպես կանոն, տվյալների հոսքին և բաժանորդներին վերաբերող տվյալների հարցումները կատարում են կապերի 24-ժամյա պատասխանատուի միջոցով, ինչպես նաև՝ միջոստիկանական համագործակցության կապի միջոցով, իրավական փոխօգնության ճանապարհով կամ՝ ուղղակիորեն ծառայություններ մատուցող միջազգային կազմակերպություններից: Պայմանավորված վարույթների բարդությամբ՝ կոնտենտային տվյալների հարցումները հազվադեպ են: Օրինակ, 2013 թվականին Հայաստանը մոտ 50 հարցումներ է ուղարկել, սակայն շատ սակավաթիվ հարցումներ է ստացել արտերկրից: Առանձնացվել են հետևյալ հիմնախնդիրները.

- Իրավական փոխօգնության բարդ և ժամանակատար ընթացակարգը,
- Բուդապեշտի կոնվենցիայի 31-րդ հոդվածից բխող՝ արագացված իրավական փոխօգնության մեխանիզմների բացակայությունը,
- Կապերի 24-ժամյա պատասխանատուների սահմանափակ գործառույթը,
- Ոստիկանական և դատական համագործակցության հարցումների պատասխանների ուշացումները, հաճախ նաև՝ իսպառ չստացումն օտար պետություններից,
- Սահմանափակ համագործակցությունը ծառայություններ մատուցող միջազգային կազմակերպությունների հետ:

Հիմնավորումների աղբյուրները.

MONEYVAL-ի երկրորդ զեկույցը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ (2012թ.), MONEYVAL-ի զեկույցը (2009), Հայաստանի համապատասխանության գնահատման երրորդ փուլի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (GRECO) զեկույցը (2014), Կրթության որակի ապահովման մասին Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2012)13 հանձնարարականը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Բարելավել կոռուպցիայի, փողերի լվացման և կիբեռհանցավորության դեմ պայքարը և կանխարգելման աշխատանքները՝ կատարելագործելով կառուցակարգային կարողությունները և պրակտիկան, ինչպես նաև՝ բարելավելով իրավական դաշտը:

ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ազգային մակարդակով ամրապնդել պայքարը կոռուպցիայի և փողերի լվացման դեմ:

3.1 Պայքար կոռուպցիայի և փողերի լվացման դեմ

ԵԽ-ն համագործակցելու է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի հետ, որը գլխավորում է Վարչապետը (ստեղծվել է Կառավարության 2015թ. փետրվարի 19-ի որոշմամբ): Խորհուրդը խորհրդակցական մարմին է, որն աջակցում է Կառավարության և պետական մարմինների՝ կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի աշխատանքներին: ԵԽ-ն ձգտելու է հասնել հետևյալ արդյունքներին.

- Հայաստանում, մասնավորապես՝ բարձրագույն կրթության ոլորտում, բարեվարքության ապահովման և կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի հետագա կատարելագործում և արդյունավետ իրագործում,
- Կապերի 24-ժամյա պատասխանատուների արդյունավետության բարձրացում,
- Իրավական փոխօգնության վերաբերյալ կանոնների և ընթացակարգերի փոփոխությունների մշակում՝ ընդունման համար:

Չնայած կառավարության ջանքերին, փողերի լվացման դեմ պայքարի օրենսդրության արդյունավետ իրագործման մարտահրավերը պահպանվում է: Հայաստանը հոժարակամորեն դիմել է, որպեսզի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (FATF) հանձնարարականների և միջոցառումների իրագործման արդյունավետության՝ MONEYVAL-ի կողմից գնահատման 5-րդ փուլում լիարժեք գնահատման ենթարկվող առաջին պետությունը լինի: 2015 թվականին նախատեսվում է ուսումնասիրողական այց կատարել Հայաստան: GRECO-ն 2014 թվականին եզրակացրել է, որ Հայաստանը բավարար չափով իրականացրել է Երրորդ փուլի գնահատման զեկույցի բոլոր հանձնարարականները կամ բավարար չափով անդրադարձել է դրանց: Իրականացված միջոցառումներից մի քանիսը վերաբերել են նոր օրենսդրության ընդունմանը: Ուստի, անհրաժեշտ է գնահատել օրենսդրության գործնական կիրառության արդյունավետությունը:

2015թ. ապրիլին GRECO-ն գնահատման 4-րդ փուլի համատեքստում գնահատման այց է կատարել Հայաստան՝ նպատակ ունենալով վերլուծել պատգամավորների, դատավորների և դատախազների շրջանում կոռուպցիայի կանխարգելման օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտը: GRECO-ի գնահատման համապատասխան զեկույցի ընդունումը նախատեսվում է 2015թ. հոկտեմբերին:

Հայաստանի՝ որպես 2012-2015թթ. ընթացքում Բոլոնիայի քարտուղարությունը նախագահած պետության համար կարևոր գերակայություն է բարձրագույն կրթությունը: Կրթությունն այն չորս գերակա ոլորտներից է, որոնք առանձնացվել են Հայաստանի կառավարության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության մեջ: ԵՄ-ն օգնելու է բարձրագույն կրթության ոլորտում բարեվարքության ապահովման և կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի կատարելագործմանը:

Բացի դրանից, Գործողությունների ծրագիրը կենտրոնանալու է կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի գծով ոստիկանության մասնագիտացած ստորաբաժանման կարողության զարգացման ուղղությամբ:

Հայաստանն օգտվելու է Արևելյան գործընկերության պետությունների հետ տարածաշրջանային համագործակցությունից, որի նպատակն է ամրապնդել պետական ոլորտում/կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումները, զարգացնել քաղաքականության վերաբերյալ խորհուրդներ տալու՝ ազգային կառույցների կարողությունները և համակարգել և մշտադիտարկել կոռուպցիայի դեմ պայքարին և բարեխիղճ կառավարմանն առնչվող բարեփոխումները՝ ներառյալ էթիկայի բնագավառում:

3.2 Պայքար կիբեռհանցավորության դեմ

Աջակցել ազգային իշխանություններին կիբեռհանցավորության դեմ պայքարի կարողությունները զարգացնելու գործում.

- Իրավական փոխօգնության համար պատասխանատու իրավասու մարմինների (ներառյալ՝ կապերի 24-ժամյա պատասխանատուի)՝ կիբեռհանցավորության և էլեկտրոնային ապացույցների հետ կապված կարողությունների զարգացում,
- Ոստիկանության՝ կիբեռհանցավորության դեմ պայքարի գծով մասնագիտացած ստորաբաժանման կարողության ավելացում:

Քրեական արդարադատության ոլորտում կիբեռհանցավորության դեմ պայքարն ամրապնդելու և կիբեռհանցավորության և էլեկտրոնային ապացույցների առնչությամբ արդյունավետ տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը հնարավոր դարձնելու առումներով Հայաստանն օգտվելու է տարածաշրջանային ծրագրից:

4. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽԹԱՆՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս ոլորտում գերակայությունները ներառում են.

- Համագործակցությունն ընտրական խնդիրների առնչությամբ,
- Տեղական ժողովրդավարության ամրապնդումը՝ օժանդակելով վարչատարածքային բարեփոխումներին և տեղական մակարդակում խթանելով ժողովրդավարական չափանիշները և մշակույթը,
- Տեղական իշխանությունների կարողության զարգացումը, տեղերում ընտրված առաջնորդների առաջնորդական հմտությունների ամրապնդումը, երկխոսության և խորհրդակցության գործելակերպի խորացումը,
- Քաղաքացիական հասարակության կառույցների կարողության զարգացման խորացումը և որոշումների կայացման գործընթացներին նրանց մասնակցության ապահովումը,
- Երկրում տեղական երիտասարդ առաջնորդների շրջանում ժողովրդավարության մշակույթի տարածումը:

Հայաստանում ընտրությունների կազմակերպումը [3] ցույց տվեց, որ բարելավվել է երկրի ժողովրդավարական կառուցակարգերի գործունեությունը: Այդ ընտրությունների վերաբերյալ միջազգային կազմակերպությունների պատրաստած զեկույցներում ընդգծվում են մի շարք դանդաղ, սակայն դրական զարգացումներ՝ ներառյալ 2011 թվականի մայիսին ընտրական նոր օրենսգրքի ընդունումը: Առանցքային նշանակություն ունի ընտրական օրենսգրքի՝ միջազգային չափանիշներին համահունչ իրագործումը: Անհրաժեշտ կլինի հաշվի առնել սահմանադրական բարեփոխման գործընթացը և դրա ազդեցությունն ընտրական օրենսդրության վրա: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և ԵԽԽՎ-ն իշխանություններին կոչ են անում հրատապորեն լուծել որոշակի խնդիրներ, ինչպիսիք են ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահության պակասը, բազմակի քվեարկության դեպքերը, բողոքարկման ընթացակարգերի ավելորդ բյուրոկրատիան, հանրային իշխանության մարմինների անկողմնակալության պակասը, վարչական ռեսուրսների չարաշահումը և այլք: Այս թերությունները հաղթահարելու համար խիստ կարևոր դեր ունեն ոչ միայն ընտրական հանձնաժողովները (հատկապես՝ ԿԸՀ-ն), այլ նաև՝ տեղական դիտորդները և ողջ քաղաքացիական հասարակությունը: ԿԸՀ-ն կարող էր աջակցել ընտրողների գրանցման համակարգի բարելավմանը, ընտրական գործընթացին կանանց մասնակցության ավելացմանը, ընտրությունների՝ լրատվամիջոցների կողմից

[3] Ներառյալ 2012թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները, 2013թ. փետրվարի 18-ի նախագահական ընտրությունները, 2009 թվականին Երևանի քաղաքապետի առաջին ուղիղ ընտրությունը, 2012թ. սեպտեմբերի 9-ի և 23-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները և 2013թ. մայիսի 5-ի տեղական ավագանիների ընտրությունները:

լուսաբանման արհեստավարժության բարելավմանը, ընտրությունների դիտարկմանը լրացուցիչ ՀԿ-ների և երիտասարդ ընտրողների ներգրավմանը և թափանցիկության մակարդակի բարձրացմանը և ընտրական գործընթացների նկատմամբ հանրության վստահության ապահովումը: Եվրոպայի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը (Կոնգրես) պատրաստ է դիտարկել 2016 թվականին անցկացվելիք՝ տեղական ինքնակառավարման մարմինների մասնակի ընտրությունները՝ Հայաստանի իշխանությունների կողմից պաշտոնական հրավերի ստացման պարագայում:

2002 թվականից ի վեր Հայաստանում տեղական ինքնակառավարման ոլորտում տեղի են ունեցել օրենսդրական և կառուցակարգային կարևոր բարեփոխումներ: Արդյունքում օրենսդրությունը և պրակտիկան ընդհանուր առմամբ համահունչ են եվրոպական չափանիշներին: Այսօրվա դրությամբ, սակայն, իրավիճակը ոչ պակաս չափով կարիք ունի զգալի բարելավման: Մոտակա տարիներին կարևորագույն մարտահրավերը լինելու է վարչատարածքային խոշորամասշտաբ բարեփոխումը նախաձեռնելը և ավարտին հասցնելը: Ներկայումս գոյություն ունեցող համայնքներից շատերը շատ փոքր են, նրանց կողմից իրենց գործառույթները կատարելու և հանրային ծառայություններ մատուցելու կարողությունը՝ սահմանափակ, իսկ ֆինանսական և մարդկային ռեսուրսները՝ չափազանց սուղ: Տեղական իշխանությունների խոշորացման և ուժեղացման անհրաժեշտությունը Կոնգրեսի կողմից ընդգծվել է Հայաստանում տեղական ժողովրդավարության վերաբերյալ Կոնգրեսի թիվ 351 (2014) հանձնարարականում, որն ընդունվել է 2014թ. մարտի 27-ին (տե՛ս ստորև):

Հայաստանի իշխանությունների գերակայությունների թվում են մնում ապակենտրոնացումը և տեղական ինքնակառավարման ուժեղ համակարգի ստեղծումը: Կառավարության թիվ 511 որոշմամբ 2014թ. մայիսի 19-ին հաստատված ծրագիրը ներառում է դրույթներ, որոնց նպատակն է բարելավել տեղական ինքնակառավարման համակարգը, մասնավորապես.

- Մատուցվող ծառայությունների շրջանակն ընդլայնելու և որակը բարելավելու միջոցով,
- Համայնքների խոշորացման փորձնական ծրագրեր իրականացնելու միջոցով,
- Տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությունը նորացնելու միջոցով,
- Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության մակարդակը բարձրացնելու միջոցով,
- Ավագանիների դերն էլ ավելի բարձրացնելու միջոցով,
- Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (Խարտիա) այն դրույթների վավերացման գործընթաց նախաձեռնելու միջոցով, որոնցից բացառություն էր կատարվել Խարտիան վավերացնելու ժամանակ:

Հայաստանի իշխանությունները շարունակում են նաև ջանքեր գործադրել տեղական մակարդակում որոշումների կայացմանը քաղաքացիների մասնակցությունն ավելացնելու ուղղությամբ, մասնավորապես՝ տեղական մակարդակում խրախուսելով կանանց մասնակցությունը հանրային կյանքին: 2013թ. մայիսին Հայաստանը վավերացրեց Խարտիայի լրացուցիչ արձանագրությունը տեղական իշխանության գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ, որից անմիջապես հետո ընդունվեց նոր օրենսդրություն, որի նպատակն էր մեծացնել քաղաքացիների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

Եվրոպայի խորհուրդն ավանդաբար և ներկայումս կարևոր դերակատարում ունի տեղական ինքնակառավարման համակարգի բարելավման գործում Հայաստանի Կառավարությանն օժանդակելու հարցում: ԵԽ-ի կողմից Հայաստանի համար իրականացվող Գործողությունների 2012–2014թթ. ծրագիրը կարևոր գործիք էր, որը երկրին օգնեց անդամ պետության կարգավիճակով պայմանավորված կանոնադրական և որոշակի այլ պարտավորությունները կատարելու ուղղությամբ շարունակվող ջանքերում: Գործողությունների սույն ծրագիրը Հայաստանում տեղական ժողովրդավարության կայացման և Կոնգրեսի թիվ 351 (2014)

հանձնարարականը կատարելու ուղղությամբ աշխատելու արժեքավոր հնարավորություն է ընձեռում: Հանձնարարականի տեքստում ողջունելի են համարվում Խարտիայի դրույթների կատարման ուղղությամբ գործադրված ջանքերը, սակայն մատնանշվում են դեռևս չփարատված մի շարք մտահոգություններ: Հայաստանի իշխանություններին կոչ է ուղղվում՝ վերանայելու սուբսիդիարության սկզբունքն իրագործելու համար անհրաժեշտ օրենսդրությունը, խթանելու միջհամայնքային համագործակցությունը, ավելացնելու ավագանիների կարողությունները և սահմանելու և երաշխավորելու տեղական ինքնակառավարման մարմինների լիակատար և բացառիկ լիազորությունների իրականացումը: Ավելին, առաջարկվում է դիտարկել խորհրդակցային ֆորմալ մեխանիզմ ստեղծելու և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վարչական վերահսկողությունը սահմանափակելու նպատակահարմարությունը: Ի վերջո, Կոնգրեսը խորհուրդ է տալիս ավելացնել տեղական ինքնակառավարման մարմինների սեփական ֆինանսական միջոցները, բարելավել համայնքերում հարկման մեխանիզմների արդյունավետությունը և վերանայել ֆինանսական համահարթեցման մեխանիզմը, որպեսզի հաշվարկի չափորոշիչներում ավելի շատ հաշվի առնի տեղական ինքնակառավարման մարմինների փաստացի տնտեսական վիճակը: Հայաստանի իշխանությունները պաշտոնապես տեղեկացրել են, որ մտադիր են Կոնգրեսի հետ համագործակցել հետմոնիթորինգային երկխոսության շրջանակում՝ նպատակ ունենալով մշակել ճանապարհային քարտեզ, որը կնպաստի Կոնգրեսի հանձնարարականների իրագործմանը:

Վարչատարածքային բարեփոխումը, որը խիստ անհրաժեշտ է, պետք է անդրադառնա այնպիսի հարցերի, ինչպիսիք են տեղական ինքնակառավարման միավորների չափերը, տեղական իշխանությունների լիազորությունները և ֆինանսական միջոցները, մարդկային ռեսուրսները և ծառայություններ մատուցելու կարողությունները: Նոր իրավական դաշտն ինքնին բավարար չի լինի այդ նպատակներին հասնելու համար: Տեղական իշխանությունների կարողություններն ամրապնդելու համար, անկախ դրանց բարեփոխվածության աստիճանից, լուրջ ներդրումներ կպահանջվեն կենտրոնական կառավարությունից՝ համագործակցելով տեղական իշխանությունների և վերջինիս միությունների հետ:

Հայաստանի Կառավարությունը ներկայումս ունի 14 փորձնական համայնքների միացման ծրագրեր, որոնք պատրաստ են իրագործման: 2015 թվականին արդեն իսկ նախատեսվում է փորձնական երեք այդպիսի ծրագրեր իրագործել Դիլիջանի, Թումանյանի և Տաթևի համայնքային փնջերում:

Հիմնավորումների աղբյուրները.

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա և վերջինիս լրացուցիչ արձանագրությունը տեղական իշխանության գործերին մասնակցելու իրավունքի վերաբերյալ, Կոնգրեսի թիվ 351 (2014) հանձնարարականը Հայաստանում տեղական ժողովրդավարության վիճակի վերաբերյալ և կից բացատրական հուշագիրը, Կոնգրեսի թիվ 338 (2013) հանձնարարականը Հայաստանի մասնակի տեղական ընտրությունների վերաբերյալ, ԵԽԽՎ-ի զեկույցը Նախագահի ընտրության դիտարկման վերաբերյալ (2013), ԵԽԽՎ-ի զեկույցը Խորհրդարանի ընտրությունների դիտարկման վերաբերյալ (2012), Ժողովրդավարության հարցերով զեկուցողների խմբի (GR-DEM) ենթախմբի պատվիրակության կողմից Հայաստան կատարած այցի զեկույցը Եվրոպայի խորհրդի նկատմամբ Հայաստանի հանձնառությունների կատարման առաջընթացի վերաբերյալ (GR-DEM(2013)3, 26-ը ապրիլի, 2013թ.):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿԸ

Հայաստանի սահմանադրական և ընտրական բարեփոխումները մոտեցնել եվրոպական չափանիշներին լիարժեքորեն համապատասխանելուն և օժանդակել տեղական

ժողովրդավարության գործընթացներին և տեղական ինքնակառավարման բարեփոխումներին Հայաստանում:

ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

4.1 Ազատ և արդար ընտրություններ

Հայաստանի ազգային ընտրական համակարգը լիարժեքորեն համապատասխանեցնել եվրոպական չափանիշներին, մասնավորապես.

- Հայաստանի սահմանադրական և ընտրական բարեփոխումները մոտեցնել եվրոպական չափանիշներին լիարժեքորեն համապատասխանելուն,
- Ամրապնդել համապետական և տեղական ընտրությունների վերաբերյալ օրենսդրությունը և համապատասխան ընտրական գործընթացները,
- Զարգացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ընտրական գործընթացին մասնակցող այլ կարևոր շահակիցների կարողությունները:

Ընտրադիտորդների զեկույցների եզրակացությունները և առաջարկությունները, Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունները և Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի զեկույցները տեղական ընտրությունների դիտարկման վերաբերյալ հաշվի կառնվեն Հայաստանում ընտրություններին աջակցելու աշխատանքներ իրականացնելու ընթացքում: Լրացուցիչ ջանքեր են անհրաժեշտ ընտրությունների իրավական և վարչական դաշտը եվրոպական չափանիշներին համապասխանեցնելու ուղղությամբ: Գործողությունների ծրագիրն աջակցելու է ազգային շահակիցների (Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ընտրությունները դիտարկող տեղական կառույցների և քաղաքացիական հասարակության) կարողությունների հետագա զարգացմանը: Անհրաժեշտ է Գործողությունների ծրագրով անդրադառնալ այնպիսի թերությունների, ինչպիսիք են ընտրական գործընթացի նկատմամբ հանրության վստահության պակասը, բողոքարկման ընթացակարգերի ավելորդ բյուրոկրատիան և հանրային իշխանության մարմինների անկողմնակալության պակասը: Գործողությունների ծրագիրն աջակցելու է ընտրությունների և/կամ քաղաքական կուսակցությունների վերաբերյալ օրենսդրությունը միջազգային չափանիշներին համահունչ փոփոխելու գործին: Այն ուղղվելու է նաև ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու մարմինների գործունեության բարելավմանը, մասնավորապես՝ ընդհանուր բնույթի ցուցումների և վեճերի լուծմանը վերաբերող ընթացակարգերի մշակման միջոցով:

Հայաստանն օգտվելու է Արևելյան գործընկերության տարածաշրջանային ցանցի մեջ լինելու հանգամանքից, որի շրջանակում փորձի փոխանակում է իրականացվելու այնպիսի խնդիրների առնչությամբ, ինչպիսիք են ընտրական օրենսդրությունը, ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու մարմինների կառուցակարգային և գործառնական կարողությունների զարգացումը, ընտրությունների առնչությամբ վերապատրաստումներ անցկացնող կենտրոնների կարողությունների զարգացումը, գենդերային հավասարությունը քաղաքականության մեջ, ընտրությունների տեղական դիտորդների գործունեությունը և ընտրական վեճերի լուծումը:

4.2 Տեղական ժողովրդավարություն

Զարգացնել տեղական իշխանությունների կարողությունները և կատարելագործել նրանց առաջնորդական հմտությունները, մասնավորապես.

- Տեղական իշխանությունների կարողությունների՝ ներառյալ մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների, հանրային էթիկայի հենանշման կարողությունների և լավագույն փորձի փոխանակման կարողությունների զարգացում,
- Տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդական կարողությունների կատարելագործում,
- Ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման խնդիրների վերաբերյալ տեղերում ընտրված ներկայացուցիչների միջև երկխոսության և կենտրոնական կառավարության հետ երկխոսության խորացում,
- Տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացին քաղաքացիական հասարակության մասնակցության խորացում,
- Երիտասարդական հանրույթի առաջնորդների (հատկապես կանանց) շրջանում ժողովրդավարության մշակույթի կայացում և տեղական ժողովրդավարության սկզբունքների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացում,
- ՀՀՀԱ-ի կազմակերպական կարողության զարգացում, Հայաստանի կառավարման համակարգում ՀՀՀԱ-ի՝ որպես ակտիվ շահակցի դերակատարման կայացում,
- Որոշակի համայնքներում տեղական իշխանություններին պատմական ժառանգությունը վերականգնելու հնարավորության ընձեռում՝ այդկերպ նպաստելով այդ համայնքների սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը:

Տեղական ժողովրդավարության ծրագիրը 2015-2018թթ. ժամանակահատվածում շարունակելու է կենտրոնանալ եվրոպական ձևավորված նորմերին և չափանիշներին համահունչ տեղական ժողովրդավարության ոլորտում օրենսդրական բարեփոխումները խթանելու, տեղական մակարդակում բարեխիղճ կառավարման սկզբունքների հիման վրա Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները զարգացնելու և քաղաքացիների մասնակցությունն ապահովող քաղաքականությունը խթանելու ուղղություններով:

ԵԽ-ն շարունակելու է իրավական աջակցություն ցուցաբերել տեղական ինքնակառավարման բարեփոխումներին, զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունը և բարելավել նրանց կողմից մատուցվող ծառայությունները, և կատարելագործել տեղերում ընտրված ներկայացուցիչների առաջնորդական հմտությունները: 2015 թվականին ԵԽ-ն ավելացնելու է տեղական ինքնակառավարման ոլորտում իրավական բարեփոխումներին ցուցաբերվող աջակցությունը՝ պահպանելով քաղաքական իրավիճակներին և օրենսդրական օրացույցի առանձնահատկություններին հարմարվելու համար անհրաժեշտ ճկունության որոշակի մակարդակը, ինչպես նաև՝ շարունակելով ակտիվորեն կիրառել համագործակցության և աջակցության այն տարբեր մեխանիզմները, որոնց բարձր արդյունավետությունն ապացուցվել է 2014 թվականին, մասնավորապես՝ հավասար գործընկերների միջև փորձի փոխանակումները (գործընկերային վերանայումները), փորձագիտական հանդիպումները, Ժողովրդավարության և կառավարման եվրոպական կոմիտեի (CDDG) արագ արձագանքի մեխանիզմը, փորձագիտական եզրակացությունների տրամադրումը և ուսումնական այցելությունները: Գերակա ոլորտներ են համարվելու փորձնական համայնքների միացումը, փորձնական համայնքներում տեղական հանրաքվեների կազմակերպումը և բարեփոխման հաջողության համար անհրաժեշտ այլ օրենսդրական փոփոխությունները՝ այնքանով, որքանով ԵԽ-ի աջակցությունը և փորձագիտական կարողությունն անրաժեշտ կլինեն այդ գործընթացները եվրոպական նորմերին համահունչ կազմակերպելու համար, միաժամանակ հաշվի առնելով նաև ԵԽ-ի անդամ այլ պետություններում նմանօրինակ բարեփոխումների իրականացման փորձը և լավագույն օրինակները:

Լավագույն փորձի ծրագրի երկրորդ փուլը մեկնարկելու է 2015թ. երկրորդ կեսին: Մարդկային ռեսուրսների կառավարումը և Հանրային էթիկայի հենանշումն ընդլայնվելու են՝ ներառելով ևս մի քանի համայնք: Նախատեսվում է նաև կազմակերպել ամառային դպրոց, որի ընթացքում

համայնքային առաջնորդները, համայնքների անդամները և քաղաքացիական հասարակության ակտիվիստները կհանդիպեն և համատեղ միջոցառումներ կիրականացնեն:

ԵԽ-ն աշխատանքային հանդիպումներ է կազմակերպել Հայաստանի տարբեր մարզերը ներկայացնող համայնքապետերի և ավագանու անդամների համար: Ընթացքի մեջ է Հայաստանի տեղական ինքնակառավարման միավորների Մարդկային ռեսուրսների կառավարման իրավիճակի վերլուծությունը: Մարդկային ռեսուրսների կառավարման պրակտիկ գործիքներից մի քանիսն արդեն իսկ մշակվել են և փորձարկվելու են 2015թ. ընթացքում:

Հետմոնիթորինգային երկխոսության շրջանակում Կոնգրեսն աջակցելու է Հայաստանի իշխանություններին թիվ 351 (2013) հանձնարարականի իրագործման ճանապարհային քարտեզը մշակելու գործում: Ավելին, Կոնգրեսի տարբեր՝ եվրոպական մի շարք պետությունները ներկայացնող անդամներից կազմված պատվիրակությունը դիտարկելու է 2016 թվականին անցկացվելիք մասնակի տեղական ընտրությունները:[4] Հաջորդ լիագումար նիստում Կոնգրեսի կողմից ընդունվելիք զեկույցը և հանձնարարականներն ուղղված են լինելու քվեարկության օրվա ընթացքում կատարված դիտարկումների վրա: Կոնգրեսի կանոններին համապատասխան, հաշվի են առնվելու նաև ընտրական միջավայրը, քաղաքական իրավիճակը, իրավական դաշտը, նախընտրական քարոզչությունը, լրատվամիջոցների իրավիճակը և այլ հանգամանքներ:

Թեմատիկ մարզային սեմինարները և համապետական քննարկումներն առավել լայն հարթակ կծառայեն լավագույն փորձը տարածելու, քաղաքացիների մասնակցությունը քննարկելու և որոշումների կայացման վրա ազդելու համար: Խրախուսվելու է տեղական իշխանությունների և ազգային իշխանությունների՝ Խորհրդարանի և Կառավարության միջև երկխոսության հարթակը, որը կձգտի կայուն, ներառական և ինստիտուցիոնալ լինել, որպեսզի դրա միջոցով պարբերաբար քննարկվեն օրենսդրական նախաձեռնությունները և բարեփոխումները, ինչպես նաև տեղական և մարզային իշխանություններին մտահոգող խնդիրները՝ ինչպես նախատեսված է Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայով:

Ակնկալվում է, որ Կոնգրեսը շարունակելու է համայնքապետերի համար իրականացվող առաջնորդության ծրագիրը՝ վերջինս ընդլայնելով և դրանում ներառելով նաև ավագանու անդամներին և քաղաքացիական հասարակության տեղական առաջնորդներին, հատուկ ուշադրություն դարձնելով երիտասարդներին և կանանց: Մի շարք միջոցառումներ կուղղվեն, մասնավորապես, համայնքների երիտասարդ առաջնորդներին, հատկապես՝ կանանց, նպատակ ունենալով բարձրացնել տեղական ժողովրդավարության սկզբունքների մասին նրանց իրազեկվածության մակարդակը, կայացնել քաղաքացիական ներգրավվածության և թափանցիկության մշակույթը, և գործընկերություն ձևավորել ընտրված ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության միջև: Դրա արդյունքում պետք է որ հնարավոր լինի նաև բարձրացնել քաղաքացիական հասարակության նախաձեռնություններին մասնակցելու և տեղական ընտրություններում առաջադրվելու կարողության և ցանկության մակարդակը:

ԵԽ-ն Կոնգրեսի միջոցով օժանդակություն է ցուցաբերելու նաև Հայաստանի համայնքների ասոցիացիային՝ նպատակ ունենալով զարգացնել Հայաստանի կառավարման համակարգում ակտիվ շահակից դառնալու՝ վերջինիս կարողությունը, ի լրումն Հայաստանի ավագանիների ասոցիացիայի և Համայնքների ֆինանսիստների միավորման հետ համագործակցությունը և փոխհարստացնող գործընկերությունը քաջալերող աշխատանքների շարունակականությանն օժանդակելուն: Քաղաքացիների մասնակցության նախաձեռնություններին ԵԽ-ն օժանդակելու է փոքր դրամաշնորհների մեխանիզմի միջոցով:

[4] Հայաստանի իշխանությունների կողմից պաշտոնական հրավեր ուղարկելու պարագայում:

Հայաստանն օգտվելու է նաև Արևելյան գործընկերության ծրագրային համագործակցության կառուցակարգի (PCF) «Տեղական ինքնակառավարման ինստիտուցիոնալ դաշտի ամրապնդումը» անվանումը կրող տարածաշրջանային ծրագրից, որը ներառելու է երկու առանձին ծրագրեր՝ նվիրված միջհամայնքային համագործակցությանը և տեղական ֆինանսների հենանշմանը, և իրագործվելու է 2015-2017թթ.՝ համագործակցելով մասնակցող այլ պետությունների հետ:

ԵԽ-ի և ԵՄ-ի «Համայնքավար քաղաքային ռազմավարություններ պատմական քաղաքներում» (COMUS) համատեղ ծրագիրն անդրադառնալու է պատմական քաղաքների համար ներդրումներ կատարելու լավագույն ուղիներին և մեխանիզմներին: Հայաստանի մեկ կամ երկու փորձնական քաղաքներում (ողջ տարածաշրջանից՝ առավելագույնը 12), որոնք սերտորեն կապակցված են իրենց շրջապատող միջավայրի հետ, փորձարկվելու են պատմական ժառանգության համար նախատեսված հասցեական ծրագրեր՝ այնտեղ, որտեղ տեղական շահակիցները դժվարություններ ունեն կենսապայմանները բարելավելու կամ սոցիալական համերաշխություն կամ տնտեսական ակտիվություն ձևավորելու հարցերում, ինչպես նաև այնտեղ, որտեղ ազգային մակարդակում նույնպես ծագում են բնական և մշակութային ժառանգության պահպանության հետ կապված խնդիրներ:

ՀԱՎԵԼՎԱԾ I. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015-2018ԹԹ. ԾՐԱԳԻՐ

Ընդհանուր նպատակները. Եվրոպայի խորհուրդն օժանդակում է Հայաստանին վերջինիս՝ որպես կազմակերպության անդամ պետության պարտավորությունները կատարելու, 2001 թվականին կազմակերպությանն անդամակցելու պահից ի վեր պետության արձանագրած նվաճումներն ամրապնդելու և Եվրոպայի խորհրդի անդամ պետություն լինելու փաստով պայմանավորված նոր մարտահրավերներին դիմագրավելու գործում: Կազմակերպությունը շարունակում է հանձնառու մնալ՝ օժանդակելու Հայաստանի ներպետական բարեփոխումներին Եվրոպայի խորհրդի մասնագիտական գործունեության հիմնական՝ մարդու իրավունքների, իրավունքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում:

Միջամտության հիմնական ոլորտները			
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՈՒՄԸ	*ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ*	*ՊԱՅՔԱՐՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆԸ ՄՊԱՌՆԱՅՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԴԵՄ*	*ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ*
Ոլորտային նպատակները			
Հայաստանի օրենսդրությունը և պրակտիկան էլ ավելի համապատասխանեցնել մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների խթանման և պաշտպանության ոլորտում Եվրոպայի խորհրդի չափանիշներին:	Աշխատել Հայաստանում դատական համակարգի լիարժեք գործունեությունն ապահովելու ուղղությամբ՝ կիրառելի եվրոպական չափանիշներին համապատասխան:	Բարելավել կոռուպցիայի, փողերի լվացման և կիբեռհանցավորության դեմ պայքարը և կանխարգելման աշխատանքները՝ կատարելագործելով կառուցակարգային կարողությունները և պրակտիկան, ինչպես նաև՝ բարելավելով իրավական դաշտը:	Հայաստանի սահմանադրական և ընտրական բարեփոխումները մոտեցնել եվրոպական չափանիշներին լիարժեքորեն համապատասխանելուն և օժանդակել տեղական ժողովրդավարության գործընթացներին և տեղական ինքնակառավարման բարեփոխումներին Հայաստանում:
Ոլորտում ակնկալվող արդյունքները			
▯ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի (ԵՍԽ)	Սահմանադրական արդարադատության ամրապնդում, ▯ Օժանդակություն	▯ Կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի՝ իշխանությունների կարողության ավելացում,	▯ Հայաստանի սահմանադրական բարեփոխումների լիարժեք համապատասխանությունը

իրագործման բարելավում ազգային մակարդակում, - ՄԻԵԴ-ի դատավճիռների կատարմանն օժանդակության ցուցաբերում, - Օժանդակություն քրեական արդարադատության բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ՝ հատկապես ուշադրություն դարձնելով դատախազներին, քննիչներին, դատավորներին, ոստիկանությանը և զինված ուժերին, - Գենդերային հավասարության խթանում և կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի խթանում, - Արտահայտվելու/լրատվամիջոցների ազատության ամրապնդում, - Տվյալների պաշտպանության ազգային համակարգերի կատարելագործում, - Խղճի և կրոնի ազատության իրավունքը պաշտպանելու կարողությունների զարգացում, - Թրաֆիքինգի նկատմամբ խոցելի խմբերի համար իրազեկությունը բարձրացնելու և նրանց կրթելու հասցեական միջոցառումների մշակում, - Մարդու իրավունքների	արդարադատության համակարգի արդյունավետության և գործունակության բարձրացմանը, - Արդարադատության համակարգի անկախության, արհեստավարժության և հաշվետու գործելակերպի ամրապնդում, - Օժանդակություն պրոբացիոն ծառայության ստեղծմանը, - Աջակցություն օրենսդրության բարեփոխումներին, - Օժանդակության ոստիկանության բարեփոխման գործընթացին:	- Էթիկայի հանձնաժողովի ինստիտուցիոնալ կարողության զարգացում, - Կիբեռհանցավորության դեմ պայքարելու՝ ազգային իշխանությունների կարողության ավելացում:	եվրոպական չափանիշներին, - Համապետական և տեղական ընտրությունների վերաբերյալ օրենսդրության և համապատասխան ընտրական գործընթացների կատարելագործում, - Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և ընտրական գործընթացին մասնակցող այլ կարևոր շահակիցների կարողությունների զարգացում - Օժանդակություն վարչատարածքային բարեփոխումներին, - Տեղական մակարդակում ժողովրդավարական չափանիշների և մշակույթի ամրապնդում, - Տեղերում ընտրված ներկայացուցիչների (համայնքապետերի և ավագանու անդամների) ամրապնդում, - Տեղական մակարդակում որոշումների կայացման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցության խորացում, - Ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման

պաշտպանության նոր ծրագրի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության ապահովում, հանձնարարականներ ծրագրի արդյունավետ իրականացման վերաբերյալ:			խնդիրների վերաբերյալ տեղերում ընտրված ներկայացուցիչների միջև երկխոսության և կենտրոնական կառավարության հետ երկխոսության խորացում, Տեղական իշխանությունների՝ իրենց համայնքների սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը նպաստելու կարողության ապահովում:
Արդյունքի ցուցիչները			
Ներպետական օրենսդրության, հատկապես՝ քրեական օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների մասնաբաժնի ավելացում՝ ներառյալ վատ վերաբերմունքի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմի ստեղծում, Մարդու իրավունքների թեմաներով և վատ վերաբերմունքի դեպքերի արդյունավետ քննության թեմաներով պատրաստված այն քննիչների մասնաբաժնի ավելացում, ովքեր հետագայում կկիրառեն ձեռք բերված գիտելիքները և հմտությունները, Միջգերատեսչական համագործակցության ձևավորում՝ նպատակ ունենալով գտնել կանանց	Արդարադատության համակարգի անկախության, արհեստավարժության և անկախության տարբեր դրսևորումներին վերաբերող օրգանական օրենսդրություն, որը համապատասխանում է եվրոպական չափանիշներին և ԵԽ-ի հանձնարարականներին Վերականգնողական ժամանակակից մոտեցման և/կամ պատժի անհատականացման եվրոպական չափանիշներին համապատասխան՝ օրենսդրական դաշտի և պետական քաղաքականության կատարելագործում,	Կոռուպցիայի դեմ պայքարի և փողերի լվացման դեմ պայքարի քաղաքականությունը և իրավակարգավորումների համապատասխանությունը GRECO-ի և MONEYVAL-ի կիրառելի հանձնարարականներին և լավագույն փորձի միջազգային չափանիշներին, Պատկան մարմինների կողմից կիբեռհանցավորության արդյունավետ քննության և էլեկտրոնային ապացույցների հետ աշխատանքի հմտությունների և գործիքների կատարելագործում:	Ընտրական օրենսդրության և պրակտիկայի, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների վերաբերյալ օրենսդրության թերությունների հաղթահարում, Ընտրությունների կազմակերպման և անցկացման համար պատասխանատու մարմինների կողմից ընտրական գործընթացը կազմակերպելու ինստիտուցիոնալ և գործառնական կարողության համապատասխանություն ԵԽ-ի չափանիշներին, Տեղական

նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի պրագմատիկ լուծումներ - Ոստիկանության վերապատրաստման համարժեք ծրագրի մշակում, որը կապահովի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեպքերին արդյունավետ արձագանքը և այդ դեպքերի արդյունավետ քննությունը, - Տվյալների պաշտպանության մասին օրենսդրության, այլ իրավական ակտերի և քաղաքականության համապատասխանեցում տվյալների պաշտպանության միջազգային և եվրոպական չափանիշներին, - Խղճի և կրոնի ազատության իրավունքին առնչվող օրենսդրության և պրակտիկայի կատարելագործում՝ եվրոպական չափանիշներին համահունչ, - Թրաֆիքինգի նկատմամբ խոցելի խմբերի շրջանում իրազեկության բարձրացում՝ այդկերպ մեղմելով այն գործոնների ազդեցությունը, որոնց հետևանքով անձինք խոցելի են դառնում թրաֆիքինգի նկատմամբ:	- Պրոբացիայի ծառայության մեթոդների ներդրում և կիրառության ընդլայնում՝ ավելացնելով հասարակությանը վերաինտեգրվելու գործընթացում այդկերպ օժանդակություն ստացող իրավախախտողների թիվը, - Արդարադատության բարեփոխման նախաձեռնություններին օժանդակող և դատաիրավական բարեփոխումների խորացմանը հանձնառու մասնագետների կենսունակ ցանցի ձևավորում, - Ոստիկանների մասնագիտական կրթության՝ ներառյալ աշխատելու ընթացքում կազմակերպվող վերապատրաստման բավարար տևողության և բարձր որակի երաշխավորում, - Մարդու իրավունքների՝ ոստիկանության կողմից խախտումների վերաբերյալ բողոքների թվի կրճատում:		ինքնակառավարմանն առնչվող իրավակարգավորման դաշտի և քաղաքականության կատարելագործում՝ հիմնվելով եվրոպական լավագույն փորձի չափանիշների վրա, - Եվրոպայի խորհրդի Կոնգրեսի հանձնարարականների՝ կյանքի կոչվող մասնաբաժնի ավելացում, հատկապես լիազորությունների ապակենտրոնացման, տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական ինքնուրույնության և քաղաքացիների մասնակցության առումներով:
Ազդեցությունը վերջնական շահառուների վրա			
- Հայաստանում ազգային իշխանությունների կողմից մարդու	- Արդարադատության համակարգի և դատավորների	- Կոռուպցիայի և փողերի լվացման դեմ պայքարի	- Կայուն ժողովրդավարության ապահովում՝

իրավունքների պաշտպանվածության բարելավում՝ արդյունավետ ինստիտուցիոնալ մեխանիզմների և քննիչների և իրավաբանների կողմից մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառության բարելավման շնորհիվ: ▯ Մարդու իրավունքների խախտման դեպքերի թվի նվազում և խախտումների պատշաճ քննություն:	անկախության և ինքնուրույնության նկատմամբ հանրության վստահության մակարդակի ավելացում, ▯ Դատարանների արդյունավետության բարելավում, արդարադատության իրականացման տեմպի արագացում դատարանների ծառայություններից օգտվողների համար, ▯ Բանտարկյալների իրավունքների նկատմամբ հարգանքի մակարդակի բարձրացում՝ պատիժը կատարող հաստատությունների կառավարումն ավելի մարդկային և արդյունավետ դարձնելու միջոցով, ▯ Նախկին բանտարկյալների կրկնահանցավորության ցուցանիշի կրճատում, ▯ Հանրության կողմից ոստիկանության դրական ընկալման և համայնքում ոստիկանության ունեցած դերակատարման դրական ընկալման ամրապնդում:	օրենսդրության և համապատասխան դաշտի շրջանակում այնպիսի արդյունավետ միջոցառումների իրականացում, որոնք նպաստում են կոռուպցիայի և փողերի լվացման նախականխմանը և կանխարգելմանը, ▯ Կիբեռհանցավորության քննության արդյունավետության մակարդակի բարձրացում:	ընտրությունները միջազգային չափանիշներին համապատասխան կազմակերպելու միջոցով, ընտրությունների և քաղաքական կուսակցությունների վերաբերյալ օրենսդրությունը բարելավելու և հավուր պատշաճի կիրառելու միջոցով, ▯ Տեղական հանրային ռեսուրսների ավելի թափանցիկ և արդյունավետ օգտագործում, ▯ Քաղաքացիների ակնկալիքներին հարմարեցված՝ ավելի հասանելի և բարձրորակ ծառայությունների մատուցում քաղաքացիներին, ▯ Ժողովրդավարաբար, ինքնուրույնաբար գործելու և հանրային իշխանությունն արդյունավետորեն իրականացնելու՝ տեղական ինքնակառավարման մարմինների կարողության ավելացում, որը կհանգեցնի ներդրումային միջավայրի բարելավման և տեղական տնտեսական աճի:

Գերակայությունների մանրակրկիտ նկարագրությունը			
Ազգային մակարդակում մարդու իրավունքների եվրոպական չափանիշների արդյունավետ կիրառություն - Մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշները կիրառելու կարողության զարգացում վճռաբեկ դատարանում, - Բարձր դատարանների և վերաքննիչ դատարանի միջև երկխոսության բարելավում՝ նպատակ ունենալով ապահովել մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշների ավելի միատեսակ կիրառությունը, - ՄԻԵԿ-ի հիմնական սկզբունքների և չափանիշների հասանելիության և ընկալման բարելավում, ՄԻԵԴ-ի հիմնական նախադեպերի և հրապարակումների թարգմանություն հայերեն, թարգմանված տեքստերի տարածում Հայաստանում՝ աշխատանքային գործընկերների ցանցի շրջանակում, - Հայաստանի դատական համակարգի կողմից մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշների կատարման և ՄԻԵԴ-ի	***Սահմանադրական բարեփոխումներ*** - Ինքնակառավարման մարմինների կազմին, լիազորություններին և գործառույթներին վերաբերող սահմանադրական դրույթների նախագծի համապատասխանություն ԵԽ-ի չափանիշներին և հանձնարարականներին, - Սահմանադրական դատարանի՝ արդարադատություն իրականացնելու կարողության զարգացում: ***Դատական բարեփոխումներ*** - Ինքնակառավարման մարմինների թափանցիկ և հաշվետու համակարգ՝ հիմնվելով դատավորների հավասարության սկզբունքի վրա, և ինքնակառավարման մարմինների աշխատանքում դատարանների նախագահների դերի կրճատում, - Վերջերս փոփոխված օրենսդրության՝ քաղաքացիական օրենսգրքի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի,	***Պայքար կոռուպցիայի և փողերի լվացման դեմ*** - Հայաստանում, մասնավորապես՝ բարձրագույն կրթության ոլորտում, բարեվարքության ապահովման և կոռուպցիայի դեմ պայքարի օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի հետագա կատարելագործում և արդյունավետ իրագործում: ***Պայքար կիբեռհանցավորության դեմ*** - Իրավական փոխօգնության համար պատասխանատու իրավասու մարմինների՝ կիբեռհանցավորության և էլեկտրոնային ապացույցների հետ կապված կարողությունների զարգացում, - Կապերի 24-ժամյա պատասխանատուների՝ կիբեռհանցավորությունը հայտնաբերելու արդյունավետության մակարդակի բարձրացում, - Իրավական փոխօգնության վերաբերյալ կանոնների և ընթացակարգերի փոփոխությունների մշակում՝	***Ազատ և արդար ընտրություններ*** - Հայաստանի սահմանադրական և ընտրական բարեփոխումները մոտեցնել եվրոպական չափանիշներին լիարժեքորեն համապատասխանելուն, - Ամրապնդել համապետական և տեղական ընտրությունների վերաբերյալ օրենսդրությունը և համապատասխան ընտրական գործընթացները, - Զարգացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ապա նաև՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կարողությունները: ***Տեղական ժողովրդավարություն*** - Տեղական իշխանությունների կարողությունների՝ ներառյալ մարդկային ռեսուրսների կառավարման կարողությունների, հանրային էթիկայի հենանշման կարողությունների և լավագույն փորձի փոխանակման կարողությունների զարգացում,

դատավճիռների կատարման բարելավում, - Արդարադատության նախարարության, ինչպես նաև՝ Կառավարության լիազոր ներկայացուցչի աշխատակազմի կարողության զարգացում, - Մարդու իրավունքների թեմաները դասավանդելու՝ Արդարադատության ակադեմիայի կարողության զարգացում, - Փաստաբանական դպրոցում մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշների հեռակա ուսուցման կարողության ամրապնդում, - Փաստաբանական դպրոցում և Փաստաբանների պալատում կրթական գործընթացների գործնական մեթոդների կատարելագործում, - Փաստաբանների պալատին անդամակցող և փաստաբանական պրակտիկա ծավալող փաստաբանների շարունակվող իրավաբանական կրթության կատարելագործում, - ԵՍԽ-ով երաշխավորված իրավունքների իրականացման ապահովում՝ Հայաստանի օրենսդրության և պրակտիկայի բարեփոխման միջոցով,	վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի, սնանկության մասին օրենքի, դատավորի վարքագծի կանոնագրքի իրագործում՝ ԵԽ-ի անդամ պետությունների լավագույն փորձին համահունչ, - Ընդունված օրենսդրության իրագործմանն օժանդակող ենթաօրենսդրական ակտերի և ընթացակարգերի մշակում, - Հեռակա ուսուցման գործիքների և առցանց դասընթացների ներդրում Արդարադատության ակադեմիայի համար, - Օժանդակություն Հայաստանում հաշտարարության մեխանիզմների և արբիտրաժի համակարգի կատարելագործմանը և արդյունավետ գործունեությանը, - Վեճերի լուծման այլընտրանքային մարմինների կարողության զարգացում: ***Քրեակատարողական բարեփոխումներ*** - Պրոբացիայի ծառայության մեթոդների ներդրում,	ընդունման համար, - Ոստիկանության՝ կիբեռհանցավորության դեմ պայքարի գծով մասնագիտացած ստորաբաժանման կարողության ավելացում:	- Տեղական ինքնակառավարման լավագույն փորձի և եվրոպական չափանիշների մասին տեղերում ընտրված ներկայացուցիչների գիտելիքների հարստացում, որի շնորհիվ սեփական գործառույթների և պարտականությունների ընկալման բարելավման միջոցով դրական փոփոխություններ տեղի կունենան նրանց համայնքներում, - Տեղական ինքնակառավարման բարեփոխումներն իրականացնելիս շարունակաբար խորհրդակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ, - Քաղաքացիների և ընտրված ներկայացուցիչների կողմից տեղական ժողովրդավարության և թափանցիկության սկզբունքների հարգում. համայնքի կյանքին և տեղական քաղաքական կյանքին քաղաքացիների ներգրավվածության և

ЕՍԽ-ով նախատեսված՝ կոլեկտիվ գանգատների համակարգի ներդրման համար անհրաժեշտ փոփոխությունների նախաձեռնում օրենքների և պրակտիկայի մեջ, ЕՍԽ-ի իրագործման վերաբերյալ ազգային զեկույցներ պատրաստելու՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հմտությունների կատարելագործում:	Բանտերում առողջապահական ծառայությունների մատուցման իրավական և ինստիտուցիոնալ դաշտի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին: ***Պրոբացիա*** Պրոբացիայի ծառայության մեթոդների ներդրում՝ միջազգային փորձագիտական օգնություն ցուցաբերելով օրենսդրական փաթեթի մշակմանը և տեխնիկական օժանդակություն ցուցաբերելով Հայաստանի երկու փորձնական մարզերում պրոբացիայի ծառայության ստեղծմանը՝ կիրառելով Եվրոպայի խորհրդի չափանիշները և եվրոպական լավագույն փորձը, Համապատասխան մասնագիտական խմբերի՝ պրոբացիայի օրենսդրությանը և պրակտիկային առնչվող կարողությունների զարգացում:		մասնակցության ավելացում, Կոնգրեսի և Հայաստանի կենտրոնական իշխանությունների միջև հետմոնիթորինգային ծրագրի համաձայնեցում՝ նպատակ ունենալով մշակել հանձնարարականների իրագործման ճանապարհային քարտեզ, 2016թ. տեղական մասնակի ընտրությունների դիտարկում (Հայաստանի իշխանություններից պաշտոնական հրավեր ստանալու պարագայում): Կոնգրեսի զեկուցողի և պատվիրակության կողմից զեկույցի և հանձնարարականների նախապատրաստում, ՀՀՀԱ-ի կարողությունների և ռեսուրսների օպտիմալացման միջոցով Հայաստանի կառավարման համակարգում ՀՀՀԱ-ի՝ որպես ակտիվ շահակցի դերակատարման կայացում, Որոշակի համայնքներում տեղական իշխանություններին պատմական ժառանգությունը վերականգնելու հնարավորության ընձեռում:

Օժանդակություն քրեական արդարադատության բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ - Քրեական գործերին վերաբերող օրենսդրության և վատ վերաբերմունքի դեմ պայքարի կառուցակարգային մեխանիզմների բարելավում և մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապասխան կիրարկում, - Քրեական վարույթի առանձին հարցերի և մարդու իրավունքների թեմաներով քննիչներին, դատախազներին և դատավորներին վերապատրաստելու՝ արդարադատության ակադեմիայի կարողության զարգացում, - Քրեական վարույթի առանձին հարցերի և մարդու իրավունքների՝ ներառյալ վատ վերաբերմունքի բողոքների արդյունավետ քննության գիտելիքների և հմտությունների բարելավում քննիչների շրջանում, - Օժանդակություն զինված ուժերում և Հատուկ քննչական ծառայությունում և Քննչական կոմիտեում վատ վերաբերմունքի բողոքների դեպքերի արդյունավետ քննության համակարգի ներդրմանը, - Զինված ուժերում և ոստիկանությունում մարդու			

իրավունքների պաշտպանությունն ապահովող իրավական դաշտի բարելավում, - Մարդու իրավունքների եվրոպական չափանիշները կիրառելու՝ զինված ուժերի և ոստիկանության կարողության զարգացում, - Եվրոպայում համայնքային ոստիկանության աշխատանքի կազմակերպման լավագույն փորձի ներկայացում իշխանություններին:			
Գենդերային հավասարություն, պայքար կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ, պայքար խտրականության դեմ - Արդարադատության համակարգի գործընթացներում գենդերային առանձնահատկությունների ներառում և առավել անբարենպաստ վիճակում հայտնված կանանց՝ ներառյալ գյուղաբնակ կանանց, ինչպես նաև՝ փոքրամասնական խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց պահանջմունքների բավարարում, - Կանանց համար արդարադատության հավասար հասանելիությունը երաշխավորող իրավական դաշտի և քաղաքականության բարելավում, - Օժանդակություն խտրականության դեմ պայքարի համապարփակ օրենքի մշակման՝ ներկայումս ընթացող աշխատանքին և օրենքի			

ընդունմանը, - Արդարադատության համակարգի գործընթացների տարբեր փուլերում ներգրավված մասնագետների (իրավապահ մարմինների ներկայացուցիչների, քննիչների, դատախազների, դատավորների, փաստաբանների) շրջանում գենդերային հավասարության, կանանց իրավունքների և խտրականության դեմ պայքարի գիտելիքների և հմտությունների կատարելագործում, - Կանանց և տղամարդկանց միջև հավասարության մշտադիտարկման և գնահատման միջոցառումների իրականացում և բարելավման մեխանիզմների ներդրում, - Կանանց իրավազորելու համար անհրաժեշտ գիտելիքների և ռեսուրսների հասանելիության բարելավում քաղաքացիական հասարակության շարքերում գենդերային հավասարության ջատագովների շրջանում, - Աջակցություն իշխանություններին թրաֆիքինգի նկատմամբ խոցելի խմբերի, հատկապես՝ ռիսկի ենթակա խմբերի համար իրազեկությունը բարձրացնելու և կրթման հասցեական միջոցառումներ մշակելու գործում, - Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և պայքարի մասին			

ԵԽ-ի կոնվենցիայի (CETS No.: 210) վերաբերյալ իրազեկության բարձրացում ներպետական շահակիցների շրջանում՝ այդկերպ նրանց հնարավորություն ընձեռելով առավել իրազեկված որոշումներ կայացնել Կոնվենցիայի հնարավոր ստորագրման և վավերացման մասին, - Թրաֆիքինգի, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության խնդիրների լուծման մեխանիզմների բարելավում ոստիկանության կողմից:			
Արտահայտվելու/լրատվամիջոցների ազատության ամրապնդում - Հայաստանում գործող ինքնակարգավորման մարմինների տեսանելիության, վերաբերելիության և արդյունավետության հետագա բարելավում, - Օժանդակություն լրատվամիջոցների ազատության խնդիրներով զբաղվող ՀԿ-ների և պետական մարմինների միջև համագործակցության ձևավորմանը և խորացմանը, - Հանրային հեռարձակողի անկախությունն ապահովելու համար Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների չափանիշների և առկա գործելակերպի վերաբերյալ պատգամավորների իրազեկության			

բարձրացում՝ հանրային հեռարձակողի ֆինանսավորման և ծրագրերի վերաբերյալ պատգամավորներին տրվող որոշակի առաջարկությունների/ուղենիշների արդյունքում, ▯ Ազգային օրենսդրության և լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մակարդակի բարձրացում, հատկապես հետևյալ ոլորտներում. հանրային հեռարձակում, լրատվամիջոցների գործունեությունը կարգավորողների անկախություն, հանրային տեղեկատվության հասանելիություն, լրատվամիջոցների սեփականության կենտրոնացվածություն և թափանցիկություն, ինչպես նաև արտահայտվելու ազատություն՝ ներառյալ ինտերնետում, ▯ Ազգային օրենսդրության և լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի՝ եվրոպական չափանիշներին համապատասխանության մակարդակի բարձրացում՝ լրագրողների պաշտպանության համակարգի բարելավման			

նպատակով, - Լրագրողների իրավունքների և մասնագիտական էթիկայի թեմաներով լրագրողների վերապատրաստումների բարելավում, - Օժանդակություն բարձրագույն ուսումնական հաստատություններում լրագրողների մասնագիտական պատրաստման բարելավմանը:			
Տվյալների պաշտպանություն Կատարելագործել և զարգացնել տվյալների պաշտպանության ազգային համակարգերը - Տվյալների պաշտպանության մասին օրենսդրության, իրավական այլ ակտերի և քաղաքականության ընդգրկման շրջանակի ընդլայնում՝ տվյալների պաշտպանության միջազգային և եվրոպական չափանիշներին համահունչ, - Վերահսկողող մարմնի կողմից իրականացվող վերահսկողության խստացում՝ անհատների համար երաշխավորելով պաշտպանության ամենաբարձր մակարդակը, - Իրավաբանների և այլ մասնագետների (ներառյալ դատավորների, դատախազների, փաստաբանների)՝ տվյալների պաշտպանությանը վերաբերող օրենսդրությունը կիրառելու			

կարողությունների զարգացում:			

ՀԱՎԵԼՎԱԾ II. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵՆ. € 16 447 533[5]

ՈԼՈՐՏԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	FUNDS SECURED*				ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ	ԸՆԴԱՄԵՆԸ, ԸՍՏ ՈԼՈՐՏԻ
	ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ**	ԵՄ/ԵԽ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ	ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	ԸՆԴԱՄԵՆԸ		
1. Մարդու իրավունքների պաշտպանություն և խթանում	€ 50 000	€ 450 000	0	€ 500 000	€ 6 150 000	€ 6 650 000
2. Արդարադատության ապահովում	€ 218 692	€ 2 350 519	€ 554 700	€ 3 123 911	€ 1 500 000	€ 4 623 911
3. Պայքար իրավունքի գերակայությանը սպառնացող գործոնների դեմ	€ 40 000	€ 360 000	0	€ 400 000	€ 0	€ 400 000
4. Ժողովրդավարական կառավարման խթանում	€ 39 500	€ 355 500	€ 2 378 622	€ 2 773 622	€ 2 000 000	€ 4 773 622
ԸՆԴԱՄԵՆԸ	**€ 348 192**	**€ 3 516 019**	**€ 2 933 322*** **	**€ 6 797 533**	**€ 9 650 000**	**€ 16 447 533**

Ծանոթագրություն.

* Չի ներառում տարածաշրջանային ծրագրերի համար ապահովված ֆինանսավորումը:

** Ներառում է ԵՄ/ԵԽ համատեղ ծրագրերի համար ԵԽ-ի հանգանակած զումարները:

*** Դանիայի, Նորվեգիայի, Շվեյցարիայի և «Human Rights Trust Fund» հիմնադրամի կամավոր հանգանակությունները:

[5] Չի ներառում տարածաշրջանային ծրագրերը:

ՀԱՎԵԼՎԱԾ III. ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՑԱՆԿ

(ենթակա է լրամշակման Գործողությունների ծրագրի իրագործման ընթացքում՝ համապատասխան ոլորտի բյուջետային հատկացման սահմաններում)

Ծրագրի անվանում	Տևողություն	Կարգավիճակ	Ֆինանսավորման կարգավիճակ	Հիմնական գործընկերներ
1. Մարդու իրավունքների պաշտպանություն և խթանում				
Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպերի կիրառման ամրապնդումն ազգային մակարդակում	36 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Արդարադատության նախարարություն, Վճռաբեկ դատարան, Արդարադատության ակադեմիա
ՄԻԵԴ-ի հիմնական նախադեպերի և հրապարակումների թարգմանությունը հայերեն	36 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Կառավարության լիազոր ներկայացուցչի աշխատակազմ Դատավորների միություն Փաստաբանների պալատ
Օժանդակությունը Մարդու իրավունքների պաշտպանության նոր՝ 2016-2018թթ. գործողությունների ծրագրի մշակմանը և իրագործմանը	36 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Արդարադատության նախարարություն և այլ շահագրգիռ մարմիններ
Աջակցությունը Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքարը վատ վերաբերմունքի	24 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	Արդարադատության նախարարություն և Արդարադատության ակադեմիա

և անպատժելիության դեմ				
Արևելյան գործընկերության հինգ պետություններում կանանց համար արդարադատության հասանելիության բարելավումը	24 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	ՀՀ շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ, իրավաբաններ, քաղաքացիական հասարակություն
Լրատվամիջոցների ազատության, անկախության, բազմակարծության և բազմազանության բարելավումը	36 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	ՀՀ շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ, Ազգային ժողով
Տեղեկատվական հասարակությունը և ինտերնետը կառավարման համակարգում	18 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	ՀՀ շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ, Ազգային ժողով

Ծրագրի անվանում	Տևողություն	Կարգավիճակ	Ֆինանսավորման կարգավիճակ	Հիմնական գործընկերներ
Օժանդակությունը ոստիկանության բարեփոխումներին և պայքարը ոստիկանությունում վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ	36 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Ոստիկանություն
Հայաստանի դատական համակարգի կողմից մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների չափանիշների կիրառության ներդաշնակեցումը	24 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Վճռաբեկ դատարան, Սահմանադրական դատարան, վերաքննիչ դատարաններ, առաջին ատյանի դատարաններ, Արդարադատության ակադեմիա
Հայաստանում սոցիալական իրավունքների նկատմամբ հարգանքի ամրապնդումը՝ Եվրոպական սոցիալական խարտիայի դրույթներին համահունչ	24 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և այլ շահագրգիռ նախարարություններ, Ազգային ժողով, Աշխատանքի տեսչություն, իրավապաշտպան ՀԿ-ներ, սոցիալական գործընկերներ
Մարդու իրավունքների՝ ներառյալ սոցիալական իրավունքների եվրոպական չափանիշների կապակցությամբ իրավաբանների կարողության զարգացումը	24 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Փաստաբանական դպրոց և Փաստաբանների պալատ
Զինված ուժերում մարդու իրավունքների եվրոպական	36 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Պաշտպանության նախարարություն

չափանիշների կիրառության ամրապնդումը				
Բարձրագույն ուսումնական հաստատություններում լրագրողների մասնագիտական կրթության կատարելագործումը	24 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	ՀՀ շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ, քաղաքացիական հասարակություն և լրատվամիջոցների կազմակերպություններ
Գենդերային հավասարությունը, պայքարը խտրականության դեմ և պայքարը կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ	36 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	ՀՀ շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ, Ազգային ժողով, ՀԿ-ներ

Ծրագրի անվանում	Տևողություն	Կարգավիճակ	Ֆինանսավորման կարգավիճակ	Հիմնական գործընկերներ
2. Արդարադատության ապահովում				
Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում	24 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	Արդարադատության նախարարություն, Գլխավոր դատախազություն, Մարդու իրավունքների պաշտպան, ՀԿ-ներ
Աջակցություն Հայաստանում պրոբացիոն ծառայության ստեղծմանը[6]	24 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է (ֆինանսավորում անհրաժեշտ կլինի շարունակելի ծրագրի համար)	Արդարադատության նախարարություն, Գլխավոր դատախազություն, դատավորներ, ՀԿ-ներ
Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը[7]	24 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է (ֆինանսավորում անհրաժեշտ կլինի շարունակելի ծրագրի համար)	Արդարադատության նախարարություն
Քրեակատարողական բարեփոխումները	36 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Արդարադատության նախարարություն, Գլխավոր դատախազություն, դատավորներ, Ոստիկանություն, ՀԿ-ներ

[6] Ընթացիկ ծրագրի ավարտից հետո նախատեսված են հետագա աշխատանքներ: Դրանց շրջանակը և բյուջեն որոշվելու են հետագայում:
[7] Նույն տեղը:

3. Պայքար իրավունքի գերակայությանը սպառնացող գործոնների դեմ				
Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար	24 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	Արդարադատության նախարարություն, Գլխավոր դատախազություն, դատավորներ, Ոստիկանություն, ՀԿ-ներ
Պայքարը կոռուպցիայի դեմ և բարեխիղճ կառավարման խթանումը, պայքարը փողերի լվացման դեմ	36 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	ՀՀ շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ
Քրեական արդարադատության համակարգում պայքարը կիբեռհանցավորության դեմ	36 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	ՀՀ շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ
Տվյալների պաշտպանության իրավունքի ամրապնդումը	36 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	ՀՀ շահագրգիռ նախարարություններ և պետական այլ մարմիններ

Ծրագրի անվանում	Տևողություն	Կարգավիճակ	Ֆինանսավորման կարգավիճակ	Հիմնական գործընկերներ
4. Ժողովրդավարական կառավարման խթանում				
Աջակցություն տեղական ժողովրդավարության ամրապնդմանը[8]	36 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է (ֆինանսավորում անհրաժեշտ կլինի շարունակելի ծրագրի համար)	Տարածքային կառավարման նախարարություն, Ֆինանսների նախարարություն, Ազգային ժողով, Համայնքների ասոցիացիա, տեղական ինքնակառավարման առանձին մարմիններ
Ինստիտուցիոնալ աջակցություն Հայաստանի համայնքների միությանը	30 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	Համայնքների ասոցիացիա
Աջակցություն Հայաստանում ընտրություններին առնչվող շահագրգիռ կառույցներին	36 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Արդարադատության ակադեմիա
Ընտրական օրենսդրության և պրակտիկայի բարեփոխումները, ընտրական գործընթացների առնչությամբ տարածաշրջանային համագործակցության զարգացումը	36 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	Արդարադատության նախարարություն, Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Ազգային ժողով, տեղերում ընտրված ներկայացուցիչներ
Համայնքավար քաղաքային ռազմավարությունները	30 ամիս	Ընթացքի մեջ է	Ֆինանսավորումն ապահովված է	Մշակույթի նախարարություն

[8] Ընթացիկ ծրագրի ավարտից հետո նախատեսված են հետագա աշխատանքներ: Դրանց շրջանակը և բյուջեն որոշվելու են հետագայում:

պատմական քաղաքներում (COMUS)				
Աջակցությունը սահմանադրական և ընտրական բարեփոխումներին, Հայաստանում ընտրություններին առնչվող շահագրգիռ կառույցների կարողությունների զարգացումը	36 ամիս	Առաջարկվել է	Անհրաժեշտ է ֆինանսավորում	Կենտրոնական ընտրական հանձնաժողով, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ